



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«30» հոկտեմբերի 2025 թ.

No 1/18-4/66361-2025

«ԼՈՒԻՍՈՖՏ» ՍՊԸ-ի, (ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ՝ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄԻ
20.09.2024թ. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ «ԻԲՍ ԷՔՍՊԵՐՏԻԶԱ» ՍՊԸ-ի ՀԵՏ) ՓՈԽՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԼԵՎՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ,
Ք.ԵՐԵՎԱՆ, ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ 105/1,
ԷԼ.ՓՈՍՏ՝ INFO@LUISOFTWARE.COM,
ՀԵՌ. 099 055-633

Հարգելի պարոն Կիրակոսյան,

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Լուիսոֆտ»
ՍՊԸ-ի, (Համատեղ գործունեության՝ կոնսորցիումի 20.09.2024թ. պայմանագիր «ԻԲՍ
Էքսպերտիզա» ՍՊԸ-ի հետ) (այսուհետ՝ Կատարող) միջև 2024 թվականի նոյեմբերի 28-
ին կնքված N ՀՀՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-24/4 ծածկագրով գնման պայմանագրի N 1 հավելվածի
5-րդ կետի Պահանջ 2-ի համաձայն՝ Կատարողը ոչ ուշ, քան պայմանագրի ուժի մեջ
մտնելու օրվանից հաշված 70-րդ օրացուցային օրը Պատվիրատուին պետք է
ներկայացնեք համակարգի ամբողջական տեխնիկական առաջադրանքը:
Պայմանագիրն ուժի մեջ է մտել 2024 թվականի նոյեմբերի 28-ին: Պայմանագիրը ուժի
մեջ մտնելու օրվանից հաշված 70-րդ օրացուցային օրը լրացել է 2025 թվականի հուլիսի
31-ին և Կատարողը 2025 թվականի հուլիսի 31-ին համակարգի ամբողջական
տեխնիկական առաջադրանք չի ներկայացրել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով N ՀՀՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-24/4 ծածկագրով
գնման պայմանագրի 2-րդ կետի 2.1.3-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությունները՝ ՀՀ
պետական եկամուտների կոմիտեն ստիպված է միակողմանի լուծել պայմանագիրը և
պայմանագրի մասով գանձել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված 9 600



000 ՀՀ դրամի որակավորման և 6 400 000 ՀՀ դրամի պայմանագրի ապահովման գումարները:

Միևնույն ժամանակ Ձեզ եմ ներկայացնում Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու մասով հաշվարկված տուգանքի և տույժերի հաշվարկը.

տուգանքի հաշվարկ՝ $60\,000\,000 \times 0.5\% = 300\,000$ ՀՀ դրամ,

տույժի հաշվարկ՝ $60\,000\,000 \times 0.05\% = 30\,000$ ՀՀ դրամ,

59 աշխատանքային օրվա ուշացման համար՝ $30\,000 \times 59 = 1\,770\,000$ ՀՀ դրամ:

Տեղեկացնում եմ, որ «Լուիսֆո» ՍՊԸ-ն, (Համատեղ գործունեության՝ կոնսորցիումի 20.09.2024թ. պայմանագիր «ԻԲՍ Էքսպերտիզա» ՍՊԸ-ի հետ) պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 2 070 000 ՀՀ դրամ՝ Պայմանագրի 5.2 և 5.3 կետերի համաձայն որպես տուգանք և տույժ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով սահմանված դրույթները չպահպանելու դեպքում Պատվիրատուն կնախաձեռնի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ընթացակարգը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

11/3/2025

X

ԴԱՎԻԹ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Signed by: MATEVOSYAN DAVIT 3601870398

ԴԱՎԻԹ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Կատ.՝ Գ.Ղազարյան
ԳԿՎԱՎ գնումների համակարգման բաժին
Հեռ.՝ 060-844-7

«Հաշվարկային փաստաթուղթ չիսանրվող այլ փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով դուրսգրվումը պայմանավորված ՀՀ ՊԵԿ էլեկտրոնային համակարգերում փոփոխությունների իրականացման խորհրդատվական ծառայությունների մատուցման մասին» N ՀՀՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-24/4 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ

ք. Երևան

29.08.2025թ.

2025 թվականի օգոստոսի 29-ին տեղի է ունեցել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 2024 թվականի հունիսի 18-ի թիվ 192/Դ-Ա հրամանով հաստատված մասնագիտական խմբի նիստը, որի օրակարգում ներառված է եղել մեկ հարց:

Նիստին ներկա էին մասնագիտական խմբի ղեկավար Լենա Պողոսյանը, խմբի անդամներ՝ Արմինե Գրիգորյանը և Իրինա Վարդանյանը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա «ԼուիՍֆոն» ՍՊ, «ԻԲՍ Էքսպերտիզա» ՍՊ ընկերությունների (այսուհետ՝ միասին՝ Կատարող) միջև 2024 թվականի նոյեմբերի 28-ին կնքվել է «Հաշվարկային փաստաթուղթ չիսանրվող այլ փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով դուրսգրվումը պայմանավորված ՀՀ ՊԵԿ էլեկտրոնային համակարգերում փոփոխությունների իրականացման խորհրդատվական ծառայությունների մատուցման մասին» N ՀՀՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-24/4 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1.2. կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է պայմանագրին կից N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետներում:

Պայմանագրի 7.1. կետի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Նույն կետի 2-րդ պարբերության համաձայն՝ պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների ու պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

N 1 հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ Կատարողը պետք է ներկայացնի համակարգի տեխնիկական առաջադրանքը:

N 1 հավելվածի 5-րդ կետի Պահանջ 2-ի համաձայն՝ Կատարողը ոչ ուշ, քան պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 70-րդ օրացուցային օրը Պատվիրատուին պետք է ներկայացնի համակարգի ամբողջական տեխնիկական առաջադրանքը, իսկ մինչև վերջնաժամկետը պետք է ներկայացնի առանձին բաժինների տեխնիկական առաջադրանքներ՝ պատվիրատուի հետ համաձայնեցված առաջնահերթությամբ (...):

N 1 հավելվածով ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից հաշված 210 օրացուցային օր:

Պայմանագրի 2.1. կետի 2.1.3 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուին իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե՝ ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին, բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

1

Պայմանագիրն ուժի մեջ է մտել 2024 թվականի նոյեմբերի 28-ին, որը նույն օրը հաշվառվել է նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից:

Սույնով մասնագիտական խումբը նախ արձանագրում է, որ 2024 թվականի նոյեմբերի 28-ից հետո Կատարողի կողմից պարբերաբար ներկայացված N 1 հավելվածի 5-րդ կետով նախատեսված համակարգի տեխնիկական առաջադրանքը եղել է թերի և ոչ ամբողջական: Այսինքն՝ Կատարողը N 1 հավելվածի 5-րդ կետի Պահանջ 2-ի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 70-րդ օրացուցային օրը N 1 հավելվածի 5-րդ կետով նախատեսված համակարգի ամբողջական տեխնիկական առաջադրանք չի ներկայացրել:

Վերջին անգամ Կատարողը N 1 հավելվածի 5-րդ կետով նախատեսված համակարգի տեխնիկական առաջադրանքը ներկայացրել է 2025 թվականի օգոստոսի 14-ին, որը նույնպես թերի է և ոչ ամբողջական ստորև նշված պատճառաբանություններով: Այսպես.

1) N 1 հավելվածի 1.1. կետով սահմանվել է. «Համակարգում պետք է ավելացվի նոր բաժին՝ «Այլ Փաստաթուղթ» անվամբ: Էջի միջոցով պետք է հնարավոր լինի լրացնել և դուրս գրել, ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթուղթ՝ անմիջապես ընդերքով փաստաթղթի պետակը, ինչպես նաև դիմել ստեղծված (փոփոխված) վերջին ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթղթերի վերաբերյալ տվյալներ: Էջի միջոցով պետք է հնարավոր լինի նաև ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթուղթը կրկնօրինակել կամ ներբեռնել XML տարբերակով որպես սևագիր: «Այլ Փաստաթուղթ» բաժինը պետք է համապատասխանի «Էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր» համակարգի ընդհանուր տեսքին և դիզայնին»:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջադրանքում բացակայում է N 1 հավելվածի 1.1. կետով նախատեսված էջի տեխնիկական առաջադրանքը, այդ թվում՝ N 1 հավելվածի 5-րդ կետի Պահանջ 2-ի 3.1.1. կետով նախատեսված գործառնության մանրամասն նկարագրությունը, 3.1.2. կետով նախատեսված ինտերֆեյսային մանրամասն նկարագրությունը:

2) N 1 հավելված 1.2. կետով սահմանվել է. ««Այլ Փաստաթուղթ» բաժինը պետք է ունենա հետևյալ ենթաբաժինները՝ Սևագրեր, Դուրս գրված, Միավերնով դուրս գրված»:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջադրանքում բացակայում է N 1 հավելված 1.2. կետով նախատեսված էջերի տեխնիկական առաջադրանքները, այդ թվում՝ N 1 հավելվածի 5-րդ կետի Պահանջ 2-ի 3.1.1. կետով նախատեսված գործառնության մանրամասն նկարագրությունը, 3.1.2. կետով նախատեսված ինտերֆեյսային մանրամասն նկարագրությունը:

3) N 1 հավելված 1.3. կետով սահմանվել է. «Սևագրեր ենթաբաժնի միջոցով պետք է հնարավոր լինի ստեղծել ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթուղթ, որոնել (ըսկ պարամետրերի), դիմել, արդարձել, ցնցել, կրկնօրինակել սևագիր ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթուղթ, ներբեռնել XML տեսակի փաստաթուղթ և արդարահանել (այդ թվում PDF, XML և XLS), ինչպես նաև ստորագրել (դուրս գրել) ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթուղթ: Ընդ որում, որոշ գործողություններ պետք է հնարավոր լինի իրականացնել նաև բացված փաստաթղթի էջում (օրինակ՝ կրկնօրինակել, արդարահանել և այլն), ինչպես նաև պետք է հնարավոր լինի դիմել փաստաթղթի PDF տարբերակը: Եթե լրացված փաստաթուղթը սխալներ, չի պարունակում, ապա բացված փաստաթղթի էջում պետք է ցուցադրվի նշանով: Եթե

2

փաստաթուղթում առկա լինեն սիսայ լրացված կամ պարզադիրքի լրացման ենթակա դաշտերը, որոնք չեն լրացվել, ապա բացված փաստաթուղթի էջում պետք է ցուցադրվի կարմիր շրջանակ (սիսայ պարունակող դաշտերի, բանակի և սիսայների վերաբերյալ տվյալներով, ինչպես նաև սիսայ պարունակող բոլոր դաշտերը գումարտկանք), որի կողքին առկա սյաբների միջոցով ինտրալոգ պետք է լինի հերթով տեղափոխվել սիսայ պարունակող դաշտերում: Պետք է հետարվոր լինի հանել դաշտերի գումարտկանք կարմիր շրջանակին սեղմելու դեպքում»:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական արաջարանքում բացակայում է N 1 հավելված 1.3. կետով նախատեսված էջի տեխնիկական արաջարանքը, այդ թվում՝ N 1 հավելվածի 5-րդ կետի Պահանջ 2-ի 3.1.1. կետով նախատեսված գործառնությունն մանրամասն նկարագրությունը, 3.1.2. կետով նախատեսված ինտերֆեյսային մանրամասն նկարագրությունը:

Հարկ է նշել, որ Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական արաջարանքում N 1 հավելված 1.3. կետով նախատեսված ենթաբաժնի և դրանում կատարվող գործողությունների մասին նկարագրություն առհասարակ առկա չէ:

Միաժամանակ, N 1 հավելված 1.3. կետով նախատեսված պայմանի մասով Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական արաջարանքում նկարագրվել են թերի և բացակայող նկարագրություններ: Մասնավորապես՝ բացակայում են բացված փաստաթղթի էջից փաստաթղթերի XML, excel տարբերակներով արտահանման ձևաչափերը և դրանց ներբեռնման և արտահանման առանձնահատկությունների նկարագրությունը, ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթղթի PDF ձևատեսքը իր բովանդակությամբ չի համապատասխանում ՀՀ հարկային օրենսգրքի և ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 21-ի N 392-Ն որոշմամբ սահմանված փաստաթուղթում ներառվող տվյալներին (N 1 հավելվածի «Նպատակը» մասում նշվել է, որ հայտով ներկայացված փոփոխությունները պետք է իրականացվեն իրավական ակտերին համապատասխան), ինչպես օրինակ՝

- փաստաթղթի անվանումը վերնագրվել էր «հարկային հաշիվ», մինչդեռ այդ փաստաթուղթը չի կարող հարկային հաշիվ համարվել, այն ՀՀ հարկային օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով օրենսդրությամբ սահմանված կարգով կազմվող հաշվարկային փաստաթուղթ (ՀՀ հարկային օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկային հաշիվը հաշվարկային փաստաթղթի տեսակ է՝) չհամարվող այլ փաստաթուղթ է (այդ մասին տեղեկացվել է նաև 2025 թվականի մարտի 12-ին կազմակերպված առցանց հանդիպման ընթացքում),

- փաստաթուղթում նախատեսվել են ճշգրիտ հաշվի սերիա և համար, ճշգրիտ հաշվի դուրս գրման անաթիվ դաշտեր, այն դեպքում, երբ տվյալ փաստաթղթի համար վերոնշյալ իրավական ակտերով ճշգրտում սահմանված չէ,

- «ապրանք մատակարարող (առաքող) անձի տվյալներ» հատվածում ՀՀ դաշտի համար փաստաթղթերից մեկում նախատեսվել է 4 վանդակ, իսկ մյուսում վանդակներ ընդհանրապես չեն նշվել, մինչդեռ ֆիզիկական անձի ՀՀ-ն հստակ է և կազմված է 10 նիշից,

- ապրանք մատակարարող ֆիզիկական անձի անուն, ազգանվան դաշտը անվանվել է «Անվանում», սակայն վերոնշյալ որոշմամբ հստակ սահմանված է, որ պետք է փաստաթուղթում ներառվի «Անուն, ազգանուն»-ը,

- ապրանք մատակարարող ֆիզիկական անձի հասցեի դաշտը նշվել է «Գտնվելու վայր (հասցե)», մինչդեռ վերոնշյալ որոշմամբ հստակ պետք է լիներ «Բնակության վայրի հասցե»,

- ապրանք մատակարարող ֆիզիկական անձի համար պետք է նախատեսվել անձնագրի (կամ անձը նույնականացնող այլ փաստաթղթի) սերիան և (կամ) համարը տվյալներով դաշտ, որը ձևատեսքում չկա,

- «ապրանք ձեռք բերող անձի տվյալներ» հատվածում նշվել են «անձը հաստատող փաստաթուղթ, սերիա և/կամ համար, ՀՇՀ» տվյալները, մինչդեռ ապրանք ձեռք բերողը չի կարող ֆիզիկական անձ լինել և ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 21-ի N 392-Ն որոշման շրջանակում ապրանք ձեռք բերողը կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր է,

- «Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համար» դաշտում նախատեսված չէ, որ այդ դաշտում ՀՎՀՀ-ն լրացվելու է հետևյալ կերպ՝ ԱԱՀ վճարողի հաշվառման համարը ՀՎՀՀ-ն է, որի վերջում ավելացված է թեք գիծ և «1» թվային նիշը (ՀՀ հարկային օրենսգրքի 292-րդ հոդված), պետք է ձևատեսքում հստակ նշվեր թեք գիծը,

- փաստաթղթերի ձևատեսքում ապրանքի կամ գույքի ներդրման հաշվարկային մասում նշվել են «Ձեռք (%)» կամ «Ձեռք» բնապ հարկ, իսկ թվում՝ ակցիզ հարկի գումար» դաշտերը, որոնք չպետք է լինեն փաստաթուղթում (այդ մասին տեղեկացվել է նաև 2025 թվականի մարտի 12-ին կազմակերպված առցանց հանդիպման ընթացքում),

- անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի ներդրման փաստաթուղթում նշվել է «Ապրանքներ մատակարարող (առաքող) անձի տվյալներ», սակայն այդ փաստաթուղթը կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի ներդրման մասին է, այլ ոչ ապրանքի մատարարարման, և պետք է նշվեր «Ներդրող ֆիզիկական անձի տվյալներ» (որը հայտնի է և նկարագրված է տվյալ տեսակի փաստաթղթի մասին տեխնիկական արաջարանքի նկարագրությունում),

- անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի ներդրման փաստաթուղթում նշվել է «Ապրանքներ ձեռք բերող անձի տվյալներ», մինչդեռ կազմակերպությունը ոչ թե ապրանք է ձեռք բերում, այլ այդ կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույք է ներդրվում և պետք է նշվեր «Կազմակերպության տվյալներ» (որը հայտնի է և նկարագրված է տվյալ տեսակի փաստաթղթի մասին տեխնիկական արաջարանքի նկարագրությունում),

- «ապրանք մատակարարող (առաքող) անձի տվյալներ» և «ապրանք ձեռք բերող անձի տվյալներ» հատվածները նշվել են հակառակ դիրքերով, որը չի համապատասխանում տեխնիկական արաջարանքով նկարագրված հերթականությանը և բացի այդ դրանցում պարունակվող տրամաբանական տվյալներն էլ են հակառակ նշված (օրինակ՝ ապրանք ձեռք բերողը կազմակերպությունը կամ ԱՀ-ն է, սակայն այդ տվյալներում նախատեսվել են ՀՇՀ-ի, անձնագրի դաշտ, իսկ ապրանք մատարարարող ֆիզիկական անձի հատվածում նշված չէ անձնագրի դաշտ),

- անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի ներդրման փաստաթուղթում հաշվարկային մասում աղյուսակի անունը նշվել է «Մատակարարվող (առաքվող) ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկ», մինչդեռ սա ապրանքի մատակարարման փաստաթուղթ չէ, այլ գույքի ներդրման, և անվանումը պետք է համապատասխաներ նաև տեխնիկական արաջարանքով սահմանված սահմանմանը՝ «Ներդրվող գույքի քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկ».

▪ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի **ներդրման** փաստաթղթում նշվել է «Տարա» դաշտը և ձևատեսքում նախատեսվել է հետևյալ երևացող տեքստը՝ «Տարա պլանսը լրացվում է այն դեպքում, երբ տարան չի օտարվում:», մինչդեռ տարա դաշտը նախատեսվում է ապրանքների մատակարարման դեպքում, իսկ այդ փաստաթուղթը կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի ներդրման մասին է, այլ ոչ ապրանքի մատարարարման,

▪ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի **ներդրման** փաստաթղթում չի նկարագրվել «ավտոտրանսպորտային միջոցի մակնիշ և պետհամարանիշ» դաշտերը, մինչդեռ պետք է լինել (որը հայտնի է և նկարագրված է տվյալ տեսակի փաստաթղթի մասին տեխնիկական առաջադրանքի նկարագրությունում),

▪ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի **ներդրման** փաստաթղթում «մատակարարման ամսաթիվ» է նշվել և այն դեպքում, երբ պետք է նշվեր «ներդրման ամսաթիվ», քանի որ սա ներդրման վերաբերյալ փաստաթուղթ է (որը հայտնի է և նկարագրված է տվյալ տեսակի փաստաթղթի մասին տեխնիկական առաջադրանքի նկարագրությունում),

▪ փաստաթղթերում նախատեսվել է ապրանքն առաքողի ստորագրության (ստորագրությունը, անունը, ազգանունը) հատված, որը հակասում է վերոնշյալ իրավական ակտերին, քանի որ ֆիզիկական անձը տվյալ տեսակի փաստաթղթեր ղուրս գրել չի կարող ֆիզիկական անձի փոխարեն ղուրս է գրում ապրանք ձեռք բերող կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը,

▪ նկարագրված չէ այն դեպքը, երբ արդեն ղուրս գրված PDF փաստաթղթի գեներացման ժամանակ փաստաթղթի վերնամասն ինչպես է արտացոլվելու (մինչ ղուրս գրելը, փաստաթղթը սևագիր է, ղուրս գրելուց հետո ստանում է սերիա-համար և պետք է արտացոլվի):

Միաժամանակ, հարկ է նշել, որ N 1 հավելվածի 1.3. կետով նախատեսված «որոշ գործողություններ պետք է հնարավոր լինի իրականացնել նաև բացված փաստաթղթի էջում» պահանջի մասով Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջադրանքում նկարագրված չէ սևագիր փաստաթղթի բացված էջում ապրանքացանկի աղյուսակում տողերը կրկնօրինակելու, ջնջելու, ավելացնելու հնարավորությունները և դրանց նկարագրությունը:

N 1 հավելված 1.3. կետով նախատեսված պայմանի մասով Կատարողի կողմից ներկայացված տեխնիկական առաջադրանքում նկարագրվել են թերի և բացակայող նկարագրություններ: Մասնավորապես՝ հստակ նկարագրված չէ, որ եթե փաստաթղթում արկա լինեն սխալ լրացված կամ պարտադիր լրացման ենթակա դաշտեր, որոնք չեն լրացվել, ապա այդ դեպքում է սխալ պարունակող դաշտերի վերաբերյալ համակարգը «տեղեկացնում»: Շատ դեպքերի համար նկարագրված չէ համակարգի կողմից կատարվող ստուգումների ու ցուցարկվող սխալի հարորագրությունները, իսկ որոնց մասով նկարագրված է, դրանք էլ թերի են և նշված չէ, թե որ գործողության արդյունքում է ցուցարկվում սխալի հարորագրությունը, ինչպես օրինակ՝

- նկարագրված չէ այն դեպքը երբ փորձ է կատարվում ղուրս գրել փաստաթուղթը գործադրի կատարման օրը ներառող հարկային տարվանից 3 տարի անց (որոնք հայտնի են և նկարագրված են տեխնիկական առաջադրանքի փաստաթղթի տեսակների նկարագրությունում),

▪ երբ փորձ է կատարվում լրացնել «Մատակարարման ամսաթիվ» դաշտը ընթացիկ ամսաթվից մեկ տարին գերազանցող ամսաթիվ (որոնք հայտնի են և նկարագրված են տեխնիկական առաջադրանքի փաստաթղթի տեսակների նկարագրությունում),

▪ երբ փորձ է կատարվում «Մատակարարման ամսաթիվ» դաշտում լրացնել ավելի վաղ ամսաթիվ, քան հարկ վճարողի գրանցման ամսաթիվն է (որոնք հայտնի են և նկարագրված են տեխնիկական առաջադրանքի փաստաթղթի տեսակների նկարագրությունում),

▪ երբ համակարգից օգտվողի տվյալներում (ինքնաշխատ լրացվող տվյալներում՝ անկանում, գտնվելու վայրի հասցե) կատարվել է փոփոխություն, իսկ օգտվողը փորձում է իրն տվյալներով լրացված սևագիր փաստաթուղթը ստորագրել,

▪ անձնագրային տվյալների ստուգումներ և այլն:

Հարկ է նշել, որ դեռևս 2025 թվականի մարտի 14-ի գրությամբ (ոտարկվել է էլեկտրոնային փոստերին) Կատարողին առաջարկվել էր տեխնիկական առաջադրանքում ներառել սխալի հարորագրությունների աղյուսակ հետևյալ ձևաչափով՝ «Նաև անհրաժեշտ է առանձին աղյուսակով լինի նաև սխալի հարորագրությունների ցանկ, այսինքն օգտվողն ինչ գործողություն է անում, սխալի հարորագրությունն ինչ տեսակի է /տեղեկատվական, թե սխալի/ և սխալի հարորագրության բովանդակությունը»:

4) N 1 հավելվածի 1.4. կետով սահմանվել է. «Ղուրս գրված ենթաբաժնի միջոցով հնարավոր է որոնել (ըստ պարամետրերի) և դիտել ապրանք ձեռքբերող (ստացող) կազմակերպության կա անհատ ձեռնարկատիրոջ կողմից ղուրս գրված՝ ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթղթերը, կրկնօրինակել դրանք սևագրելում, պիտեղ նոր ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթուղթ, ներբեռնել XML տեսակի փաստաթուղթ և արտահանել (այդ թվում PDF, XML և XLS), համարել սխալներով ղուրս գրված նախկինում ղուրս գրված ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթուղթ: Ընդ որում որոշ գործողություններ պետք է հնարավոր լինի իրականացնել նաև բացված փաստաթղթի էջում (օրինակ՝ կրկնօրինակել, արտահանել և այլն, ինչպես նաև պետք է հնարավոր լինի դիտել փաստաթղթի PDF տարբերակը»:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջադրանքում բացակայում է N 1 հավելված 1.4. կետով նախատեսված էջի տեխնիկական առաջադրանքը, այդ թվում՝ N 1 հավելվածի 5-րդ կետի Պահանջ 2-ի 3.1.1. կետով նախատեսված գործառնությանին մանրամասն նկարագրությունը, 3.1.2. կետով նախատեսված ինտերֆեյսային մանրամասն նկարագրությունը պահանջները,

Հարկ է նշել, որ Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջադրանքում N հավելվածի 1.4. կետով նախատեսված ենթաբաժնի և դրանում կատարվող գործողությունների մասին նկարագրությունը նույնպես արկա չէ:

Բացի այդ, N 1 հավելված 1.4. կետով նախատեսված պայմանի մասով Կատարողի կողմից համակարգի տեխնիկական առաջադրանքում նկարագրվել են թերի և բացակայող նկարագրություններ: Մասնավորապես՝ բացակայում են բացված փաստաթղթի էջից փաստաթղթերի XML, excel տարբերակներով արտահանման ձևաչափերը և դրանց ներբեռնման ու արտահանման առանձնահատկությունների նկարագրությունը, ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթղթի PDF ձևատեսքն իր բովանդակությամբ չի համապատասխանում ՀՀ հարկային օրենսգրքի և ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 21-ի N 392-Ն որոշմամբ սահմանված փաստաթղթում ներառվող տվյալներին (N 1 հավելված ի «Նպատակը» մասում նշվել

է, որ հայտնով ներկայացված փոփոխությունները պետք է իրականացվեն իրավական ակտերին համապատասխան), ինչպես օրինակ՝

- փաստաթղթի անվանումը վերնագրվել էր «հարկային հաշիվ», մինչդեռ այդ փաստաթուղթը չի կարող հարկային հաշիվ համարվել. այն ՀՀ հարկային օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով օրենսդրությանը սահմանված կարգով կազմվող հաշվարկային փաստաթուղթ (<< հարկային օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկային հաշիվը հաշվարկային փաստաթղթի տեսակ է)՝ չհամարվող այլ փաստաթուղթ է (այդ մասին տեղեկացվել է նաև 2025 թվականի մարտի 12-ին կազմակերպված առցանց հանրիպական ընթացքում),

- փաստաթղթում նախատեսվել են ճշգրիտ հաշվի սերիա և համար, ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ դաշտեր, այն դեպքում, երբ տվյալ փաստաթղթի համար վերոնշյալ իրավական ակտերով ճշգրտում սահմանված չէ,

- «ապրանք մատակարարող (առաքող) անձի տվյալներ» հատվածում ՀՇՀ դաշտի համար փաստաթղթերից մեկում նախատեսվել է 4 վանդակ, իսկ մյուսում վանդակներ ընդհանրապես չեն նշվել, մինչդեռ ֆիզիկական անձի ՀՇՀ-ն հստակ է և կազմված է 10 նիշից,

- ապրանք մատակարարող ֆիզիկական անձի անուն, ազգանվան դաշտը անվանվել է «Անվանում», սակայն վերոնշյալ որոշմամբ հստակ սահմանված է, որ պետք է փաստաթղթում ներառվի «Անուն, ազգանուն»-ը,

- ապրանք մատակարարող ֆիզիկական անձի հասցեի դաշտը նշվել է «Գտնվելու վայր (հասցե)», մինչդեռ վերոնշյալ որոշմամբ հստակ պետք է լիներ «Ընակության վայրի հասցե»,

- ապրանք մատակարարող ֆիզիկական անձի համար պետք է նախատեսվեր անձնագրի (կամ անձը նույնականացնող այլ փաստաթղթի) սերիան և (կամ) համարը տվյալներով դաշտ, որը չկա ձևատեսքում,

- «ապրանք ձեռք բերող անձի տվյալներ» հատվածում նշվել են «անձը հաստատող փաստաթուղթ, սերիա և/կամ համար, ՀՇՀ» տվյալները, մինչդեռ ապրանք ձեռք բերողը չի կարող ֆիզիկական անձ լինել և ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 21-ի N 392-Ն որոշման շրջանակում ապրանք ձեռք բերողը կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր է,

- «Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համար» դաշտում նախատեսված չէ, որ այդ դաշտում ՀՎՀՀ-ն լրացվելու է հետևյալ կերպ՝ ԱԱՀ վճարողի հաշվառման համարը ՀՎՀՀ-ն է, որի վերջում ավելացված է թեք գիծ և «1» թվային նիշը (<< հարկային օրենսգրքի 292-րդ հոդված), պետք է ձևատեսքում հստակ նշվեր թեք գիծը,

- փաստաթղթերի ձևատեսքում ապրանքի կամ գույքի ներդրման հաշվարկային մասում նշվել են «Ձեռք (%) Այդ թվում՝ բնապ. հարկ, Այդ թվում՝ անցիզ. հարկի գումար» դաշտերը, որոնք չպետք է լինեն փաստաթղթում (այդ մասին տեղեկացվել է նաև 2025 թվականի մարտի 12-ին կազմակերպված առցանց հանրիպական ընթացքում),

- անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի **ներդրման** փաստաթղթում նշվել է «Ապրանքներ մատակարարող (առաքող) անձի տվյալներ», սակայն այդ փաստաթուղթը կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի ներդրման մասին է, այլ ոչ ապրանքի մատարարարման, և պետք է նշվեր «Ներդրող ֆիզիկական անձի տվյալներ» (որը հայտնի է և նկարագրված է տվյալ տեսակի փաստաթղթի մասին տեխնիկական առաջադրանքի նկարագրությունում),

- անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի **ներդրման** փաստաթղթում նշվել է

«Ապրանքներ ձեռք բերող անձի տվյալներ», մինչդեռ կազմակերպությունը ոչ թե ապրանք է ձեռք բերում, այլ այդ կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույք է ներդրվում, և պետք է նշվեր «Կազմակերպության տվյալներ» (որը հայտնի է և նկարագրված է տվյալ տեսակի փաստաթղթի մասին տեխնիկական առաջադրանքի նկարագրությունում),

- «ապրանք մատակարարող (առաքող) անձի տվյալներ» և «ապրանք ձեռք բերող անձի տվյալներ» հատվածները նշվել են հսկայական դիրքերով, որը չի համապատասխանում տեխնիկական առաջադրանքով նկարագրված հերթականությանը և բացի այդ դրանցում պարունակվող տրամաբանական տյալներն էլ են հակառակ նշված (օրինակ՝ ապրանք ձեռք բերողը կազմակերպությունը կամ ԱՀ-ն է, սակայն այդ տվյալներում նախատեսվել են ՀՇՀ-ի, անձնագրի դաշտ, իսկ ապրանք մատարարարող ֆիզիկական անձի հատվածում նշված չէ անձնագրի դաշտ),

- անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի **ներդրման** փաստաթղթում հաշվարկային մասում աղյուսակի անունը նշվել է «Մատակարարվող (առաքվող) ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկ», մինչդեռ սա ապրանքի մատակարարման փաստաթուղթ չէ, այլ գույքի ներդրման, և անվանումը պետք է համապատասխաներ նաև տեխնիկական առաջադրանքով սահմանված սահմանմանը՝ «Ներդրվող գույքի քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկ»,

- անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի **ներդրման** փաստաթղթում նշվել է «Տարա⁷» դաշտը և ձևատեսքում նախատեսվել է հետևյալ երևացող տեքստը՝ «* Տարա սյունակը լրացվում է այն դեպքում, երբ տարան չի օտարվում», մինչդեռ տարա դաշտը նախատեսվում է ապրանքների մատակարարման դեպքում, իսկ այդ փաստաթուղթը կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի ներդրման մասին է, այլ ոչ ապրանքի մատարարարման, (բաժնեհավաք) կապիտալում գույքի ներդրման մասին է, այլ ոչ ապրանքի մատարարարման,

- անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի **ներդրման** փաստաթղթում չի նկարագրվել «ավտոտրանսպորտային միջոցի մակնիշ և պետհամարանիշ» դաշտերը, մինչդեռ պետք է լիներ (որը հայտնի է և նկարագրված է տվյալ տեսակի փաստաթղթի մասին տեխնիկական առաջադրանքի նկարագրությունում),

- անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի **ներդրման** փաստաթղթում «մատակարարման ամսաթիվ» է նշվել այն դեպքում, երբ պետք է նշվեր «ներդրման ամսաթիվ», քանի որ սա ներդրման վերաբերյալ փաստաթուղթ է (որը հայտնի է և նկարագրված է տվյալ տեսակի փաստաթղթի մասին տեխնիկական առաջադրանքի նկարագրությունում),

- փաստաթղթերում նախատեսվել է ապրանքն առաքողի ստորագրության (ստորագրությունը, անունը, ազգանունը) հատված, որը հակասում է վերոնշյալ իրավական ակտերին. ֆիզիկական անձը տվյալ տեսակի փաստաթղթեր դուրս գրել չի կարող, ուստի իր փոխարեն դուրս է գրում ապրանք ձեռք բերող կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը,

- նկարագրված չէ այն դեպքը, երբ արդեն դուրս գրված PDF փաստաթղթի գեներացման ժամանակ փաստաթղթի վերնամաստ ինչպես է արտացոլվելու (մինչ դուրս գրելը, փաստաթուղթը սևագիր է, դուրս գրելուց հետո ստանում է սեդիա-համար և պետք է արտացոլվի):

5) N 1 հավելվածի 1.5. կետով սահմանվել է: «Միայններով դուրս գրված ենթաբաժնի միջոցով հնարավոր է որոշել (ըստ պարամետրերի) և դիտել «սխալներով դուրս գրված» ֆիզիկական անձից ձեռքբերման փաթեթները, ինչպես նաև արդարահանել (այդ թվում՝ PDF, XML և XLS) դրանց վերաբերյալ տվյալները: Ընդ որում որոշ գործողություններ պետք է հնարավոր լինի իրականացնել նաև բացված փաթեթները: Ընդ որում, որոշ գործողություններ պետք է հնարավոր լինի իրականացնել նաև բացված փաթեթները: Ընդ որում, որոշ գործողություններ պետք է հնարավոր լինի իրականացնել պետք է հնարավոր լինի դիտել փաթեթները PDF տարբերակը»:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջադրանքում բացակայում է N 1 հավելված N 1-ի 1.5. կետով նախատեսված էջի տեխնիկական առաջադրանքը, այդ թվում՝ N 1 հավելվածի 5-րդ կետի Պահանջ 2-ի 3.1.1. կետով նախատեսված գործառնությունն մանրամասն նկարագրությունը, 3.1.2. կետով նախատեսված ինտերֆեյսային մանրամասն նկարագրությունը:

Հարկ է նշել, որ Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջադրանքում ևս առկա չէ N 1 հավելված 1.5. կետով նախատեսված ենթաբաժնի և դրանում կատարվող գործողությունների մասին նկարագրությունը:

Միաժամանակ, N 1 հավելվածի 1.5. կետով նախատեսված պայմանի մասով Կատարողի կողմից համակարգի տեխնիկական առաջադրանքում նկարագրվել են թերի և բացակայող նկարագրություններ: Մասնավորապես՝ բացակում են բացված փաթեթների էջից փաստաթղթերի XML, excel տարբերակներով արտահանման ձևաչափերը և դրանց ներբեռնման ու արտահանման առանձնահատկությունների նկարագրությունը: Ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթղթի PDF ձևառեսնելը իր բովանդակությամբ չի համապատասխանում ՀՀ հարկային օրենսգրքի և ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 21-ի N 392-Ն որոշմամբ սահմանված փաստաթուղթում ներառվող տվյալներին (N 1 հավելվածի «Նպատակը» մասում նշված է, որ հայտով ներկայացված փոփոխությունները պետք է իրականացվեն իրավական ակտերին համապատասխան), ինչպես օրինակ՝

- փաստաթղթի անվանումը վերնագրվել էր «հարկային հաշիվ», մինչդեռ այդ փաստաթուղթը չի կարող հարկային հաշիվ համարվել, այն ՀՀ հարկային օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով օրենսդրությամբ սահմանված կարգով կազմվող հաշվարկային փաստաթուղթ (ՀՀ հարկային օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկային հաշիվը հաշվարկային փաստաթղթի տեսակ է՝) չհամարվող այլ փաստաթուղթ է (այդ մասին տեղեկացվել է նաև 2025 թվականի մարտի 12-ին կազմակերպված առցանց հանդիպման ընթացքում),

- փաստաթուղթում նախատեսվել են ճշգրիտ հաշվի սերիա և համար, ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ դաշտեր, այն դեպքում, երբ տվյալ փաստաթղթի համար վերոնշյալ իրավական ակտերով ճշգրտում սահմանված չէ,

- «ապրանք մատակարարող (առաքող) անձի տվյալներ» հատվածում ՀՕՀ դաշտի համար փաստաթղթերից մեկում նախատեսվել է 4 վանդակ, իսկ մյուսում ընդհանրապես վանդակներ չեն նշվել, մինչդեռ ֆիզիկական անձի ՀՕՀ-ն հստակ է և կազմված է 10 նիշից,

- ապրանք մատակարարող ֆիզիկական անձի անուն, ազգանվան դաշտն անվանվել է «Անվանում», սակայն ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 21-ի N 392-Ն որոշմամբ հստակ սահմանված է, որ պետք է փաստաթուղթում ներառվի «Անուն, ազգանուն»-ը,

- ապրանք մատակարարող ֆիզիկական անձի հասցեի դաշտը նշվել է «Գտնվելու վայր (հասցե)», մինչդեռ վերոնշյալ որոշմամբ հստակ պետք է լիներ «Բնակության վայրի հասցե»,

- ապրանք մատակարարող ֆիզիկական անձի համար պետք է նախատեսվել անձնագրի (կամ անձը նույնականացնող այլ փաստաթղթի) սերիան և (կամ) համարը տվյալներով դաշտ, որը չկա ձևատեսքում,

- «ապրանք ձեռք բերող անձի տվյալներ» հատվածում նշվել են «անձը հաստատող փաստաթուղթ, սերիա և/կամ համար, ՀՕՀ» տվյալները, մինչդեռ ապրանք ձեռք բերողը չի կարող ֆիզիկական անձ լինել և վերոնշյալ իրավական ակտի (որոշման) շրջանակում ապրանք ձեռք բերողը կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր է,

- «վելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համար» դաշտում նախատեսված չէ, որ այդ դաշտում ՀՎՀՀ-ն լրացվելու է հետևյալ կերպ՝ ԱԱՀ՝ վճարողի հաշվառման համարը ՀՎՀՀ-ն է, որի վերջում ավելացված է թեք գիծ և «1» թվային նիշը (ՀՀ հարկային օրենսգրքի, հոդված 292), պետք է ձևատեսքում հստակ նշվեր թեք գիծը,

- փաստաթղթերի ձևատեսքում ապրանքի կամ գույքի ներդրման հաշվարկային մասում նշվել են «Հեղձ (%)», Այդ թվում՝ բնապ հարկ, Այդ թվում՝ ակցիզ, հարկի գումար» դաշտերը, որոնք նպետք է լինեն փաստաթուղթում (այդ մասին տեղեկացվել է նաև 2025 թվականի մարտի 12-ին կազմակերպված առցանց հանդիպման ընթացքում),

- անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի ներդրման փաստաթուղթում նշվել է «Ապրանքներ մատակարարող (առաքող) անձի տվյալներ», սակայն այդ փաստաթուղթը կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի ներդրման մասին է, այլ ոչ ապրանքի մատարարարման, և պետք է նշվեր «Ներդրող ֆիզիկական անձի տվյալներ» (որը հայտնի է և նկարագրված է տվյալ տեսակի փաստաթղթի մասին տեխնիկական առաջադրանքի նկարագրությունում),

- անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի ներդրման փաստաթուղթում նշվել է «Ապրանքներ ձեռք բերող անձի տվյալներ» մինչդեռ կազմակերպությունը ոչ թե ապրանք է ձեռք բերում, այլ այդ կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույք է ներդրվում և պետք է նշվեր «Կազմակերպության տվյալներ» (որը հայտնի է և նկարագրված է տվյալ տեսակի փաստաթղթի մասին տեխնիկական առաջադրանքի նկարագրությունում),

- «ապրանք մատակարարող (առաքող) անձի տվյալներ» և «ապրանք ձեռք բերող անձի տվյալներ» հատվածները նշվել են հակառակ դիրքերով, որը չի համապատասխանում տեխնիկական առաջադրանքով նկարագրված հերթականությանը և բացի այդ դրանցում պարունակվող տրամաբանական տյալներն էլ են հակառակ նշված (օրինակ՝ ապրանք ձեռք բերողը կազմակերպությունը կամ ԱՀ-ն է, սակայն այդ տվյալներում նախատեսվել են ՀՕՀ-ի, անձնագրի դաշտ, իսկ ապրանք մատարարող ֆիզիկական անձի հատվածում նշված չէ անձնագրի դաշտ),

- անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի ներդրման փաստաթուղթում հաշվարկային մասում աղյուսակի անունը նշվել է «Մատակարարվող (առաքվող) ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկ», մինչդեռ սա ապրանքի մատակարարման փաստաթուղթ չէ, այլ գույքի ներդրման և անվանումը պետք է համապատասխաներ նաև տեխնիկական առաջադրանքով սահմանված սահմանմանը «Ներդրվող գույքի քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկ»,

▪ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի **ներդրման** փաստաթուղթում նշվել է «Տարա»-» դաշտը և ձևատեսքում նախատեսվել է հետևյալ երևացող տեքստը՝ «* Տարա սյունակը լրացվում է այն դեպքում, երբ տարան չի օտարվում»-, մինչդեռ տարա դաշտը նախատեսվում է ապրանքների մատակարարման դեպքում, իսկ այդ փաստաթուղթը կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի ներդրման մասին է, այլ ոչ ապրանքի մատարարարման,

▪ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի **ներդրման** փաստաթուղթում չի նկարագրվել «ավտոտրանսպորտային միջոցի մակիշը և պետահամարանիշ» դաշտերը, մինչդեռ պետք է լիներ (որը հայտնի է և նկարագրված է տվյալ տեսակի փաստաթղթի մասին տեխնիկական առաջադրանքի նկարագրությունում),

▪ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի **ներդրման** փաստաթուղթում «մատակարարման ամսաթիվ» է նշվել, այն դեպքում, երբ պետք է նշվեր «ներդրման ամսաթիվ», քանի որ սա ներդրման վերաբերյալ փաստաթուղթ է (որը հայտնի է և նկարագրված է տվյալ տեսակի փաստաթղթի մասին տեխնիկական առաջադրանքի նկարագրությունում),

▪ փաստաթղթերում նախատեսվել է ապրանքն առաքողի ստորագրության (ստորագրությունը, անունը, ազգանունը) հատված, մինչդեռ վերոնշյալ իրավական ակտերին հակասում է չի կարող ֆիզիկական անձը դուրս գրել տվյալ տեսակի փաստաթղթերը, ուստի իր փոխարեն դուրս է գրում ապրանք ձեռք բերող կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը,

▪ նկարագրված չէ այն դեպքը, երբ արդեն դուրս գրված PDF փաստաթղթի գեներացման ժամանակ փաստաթղթի վերնամասը ինչպես է արտացոլվելու (մինչ դուրս գրելը փաստաթուղթը սևագիր է, դուրս գրելուց հետո ստանում է սերիա-համար և պետք է արտացոլվի նաև փախեցրուլ դուրս գրված համարեւոց հետո):

6) N 1 հավելվածի 1.6. կետով սահմանվել է. «Ենթաբաժիններում պետք է հնարավոր լինի դիտել ինչպես միայն տվյալ Օգտվողի կողմից ստեղծված փաստաթղթերը, այնպես էլ տվյալ հարկ վճարողի մյուս բոլոր Օգտվողների կողմից ստեղծված փաստաթղթերը (առկա լիազորությունների շրջանակներում)»:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջադրանքում բացակայում է N 1 հավելվածի 1.6. կետով նախատեսված ամբողջական, ավարտական, պատշաճ նկարագրությունները, այդ թվում՝ N 1 հավելվածի 5-րդ կետի Պահանջ 2-ի 3.1.2. կետով նախատեսված ինտերֆեյսային մանրամասն նկարագրությունը:

Բացի այդ, Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջադրանքում նշված է բացառապես հետևյալը՝ «Իսկ փաստաթղթերի դիտանելիությունը սահմանվում է հետևյալ կերպ՝

- Օգտվողը կարող է տեսնել այլ օգտվողների ստեղծած փաստաթղթերը միայն եթե ունի՝ «Արտացոլել այլ օգտվողների փաստաթղթեր» լիազորություն):
- Լիազորությունների բացակայության դեպքում ենթաբաժինները չեն ցուցադրվում:
- Փաստաթուղթը դառնում է ոչ դիտանելի սրացողի համար, եթե ջնջվում է
- Չեղարկված փաստաթղթերը մնում են դիտանելի, բայց կարմիր նշումով»:

N 1 հավելված 1.1. կետում նշված է, որ «Այլ Փաստաթուղթ» բաժինը պետք է համապատասխանի «Էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր» համակարգի ընդհանուր

տեսքին և դիզայնին»: Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջադրանքում, սակայն հաշվի առնված չէ, թե գործող «Էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր» համակարգում ինչպես է իրականացված այդ մոտեցումը:

Պետք է նախատեսվեր կրճակ և նկարագրվեր, թե որտեղ (որ էջում (ենթաբաժնում) և որ հատվածում) պետք է արտացոլվի այդ կրճակը, սակայն նկարագրված չէ և կարևոր դրանից կրճակի անվանումը պետք է լիներ՝ «Արտացոլել այլ օգտվող(ներ)ի կողմից ստեղծված սևագիր այլ փաստաթղթերը», «Արտացոլել այլ օգտվող(ներ)ի կողմից դուրս գրված այլ փաստաթղթերը»:

Միաժամանակ Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջադրանքում «Արտացոլել այլ օգտվողների փաստաթղթերը» ճիշտ չէ նկարագրված, մասնավորապես՝ նշվել է որպես լիազորություն, սակայն դա ոչ թե լիազորություն է, այլ արդեն առկա լիազորությունների շրջանակում համակարգից օգտվողին տրվող որոշ հնարավորություն:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջադրանքում նշված «Լիազորությունների բացակայության դեպքում ենթաբաժինները չեն ցուցադրվում» նկարագրությունը չի համապատասխանում ներկայացված պահանջին՝ պետք է նկարագրվեր, որ կրճակի ակտիվացման միջոցով հնարավոր պետք է լինի արտացոլել տվյալ <ՎՀՀ-ին կից բոլոր օգտվողների կողմից սևագիր ստեղծած կամ դուրս գրված (կախված նրանից, թե որ ենթաբաժինն է նկարագրվում) ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթղթերը՝ հաշվի առնելով տվյալ օգտվողի՝ համապատասխան լիազորությունները (ունի դիտելու լիազորություն, թե՛ ոչ) Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում:

Պետք է նկարագրվեր, որ կրճակի ակտիվացման դեպքում՝ որոնման արդյունքում ստացված տվյալների հիման վրա պետք է կատարվի որոնում նաև այլ օգտվողների կողմից սևագիր ստեղծած կամ դուրս գրված (կախված նրանից, թե որ ենթաբաժինն է նկարագրվում) ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթղթերի միջավայրում:

Պետք է հաշվի առնվեր նաև համակարգի ենթաբաժիններում ցուցադրվող արժեքային տվյալների արտացոլման ժամանակ (ենթաբաժինների նկարագրությունը առկա չէ, դրան համապատասխան այս պահանջն էլ նկարագրված չէ):

Պետք է նկարագրվեր, որ կրճակը պահվածքներու դեպքում պետք է ցուցադրվեն միայն տվյալ օգտվողի կողմից սևագիր ստեղծած կամ դուրս գրված (կախված նրանից, թե որ ենթաբաժինն է նկարագրվում) ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթղթերը:

Տեխնիկական առաջադրանքում «Փաստաթուղթ դառնում է ոչ տեսանելի ստացողի համար, եթե ջնջվում է» նկարագրությունը անհասկանալի է և նման պահանջ առկա չէ, քանի որ, եթե նշվել է ստացողի համար է անտեսանելի դառում, ապա նշանակում է, որ այն արդեն դուրս է գրված, իսկ եթե դուրս է գրված, ապա հնարավոր չէ արդեն դուրս գրված փաստաթուղթը ջնջել՝ նման պահանջ առկա չէ ոչ օրենսդրությամբ, ոչ էլ Պայմանագրով, իսկ եթե ենթադրենք որ սևագիր է, ապա սևագրի ջնջման դեպքում այսպես, թե այնպես ոչ մի օգտվողի համար տեսանելի չէր լինելու:

Հարկ է նաև նշել, որ «Ստացված» ենթաբաժին չկա նախատեսված պահանջով և համակարգում «ստացող» կորմ առկա էլ չէ, որ տեսանելի կամ ոչ տեսանելի լինեն փաստաթղթերը:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջադրանքում նկարագրված են նաև ընդհանրապես «Այլ փաստաթղթեր» համակարգի **պահանջի հետ կապ չունեցող նկարագրություններ՝** «Չեղարկված փաստաթղթերը մնում են տեսանելի, բայց կարմիր նշումով» նկարագրությունը չի համապատասխանում համակարգի պահանջներին, քանի որ ոչ օրենսդրությամբ, ոչ էլ Պայմանագրի պահանջներով նախատեսված չէ, որ ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթուղթը պետք է հնարավոր լինի չեղարկել:

7) N 1 հավելվածի 1.8. կետով սահմանվել է. «Էլեկտրոնային եղանակով դուրս գրվող ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթղթերում այն դուրս գրողին վերաբերող պարտադիր լրացման ենթակա տվյալները՝ անվանումը (անունը, ազգանունը), հարկ վճարողի հաշվառման համարը (<ՀՀՀՀ-ն>), գրվելու վայրը պետք է լրացվեն ինքնաշխատ՝ տեղեկատվական բազայում առկա տվյալներով»:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջարկանքում բացակայում է N 1 հավելվածի 1.8. կետով նախատեսված ամբողջական, ավարտական, պատշաճ նկարագրությունները, այդ թվում՝ N 1 հավելվածի 5-րդ կետի Պահանջ 2-ի 3.1.1. կետով նախատեսված գործառնության մանրամասն նկարագրությունը, 3.1.2. կետով նախատեսված ինտերֆեյսային մանրամասն նկարագրությունը:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջարկանքում նկարագրված է, որ <ՀՀՀՀ-ն> «Լրացվում է մուտք գործած օգտատիրոջ <ՀՀՀՀ-ն>, ՀՀ Հարկային Ծառայության՝ ԻՄ Մասին բաժնից», որտեղից «ՀՀ Հարկային Ծառայության՝ ԻՄ Մասին բաժնից» նկարագրությունը անհավանալի է, թե դա որտեղ է և ինչ տվյալ է ինքնաշխատ լրացվելու, պետք է նշվեր, որ լրացվում է հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ մուտք գործած հարկ վճարողի <ՀՀՀՀ-ն>:

Տեխնիկական առաջարկանքում «Անվանումը (անունը, ազգանունը)» պետք է լրացվեր հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ մուտք գործած հարկ վճարողի <ՀՀՀՀ-ին համապատասխանող անվանումը, տեխնիկական առաջարկանքում նկարագրված է, նշված է միայն, որ ինքնաշխատ լրացվող դաշտ է և «Կազմակերպության անվանումից զատ, պետք է համակարգի կողմից ինքնաշխատ տարբերակով նաև ինքնաշխատ լրացվի կազմակերպության կազմակերպարարական տեսակը»:

Համակարգի տեխնիկական առաջարկանքում «Գտնվելու վայրը» հասցեի մասով նկարագրված է, որ «Պետք է արտացոլվի մուտք գործած օգտատիրոջ՝ ապրանք ձեռք բերող անձի/կազմակերպության համակարգում գրանցված հասցեն», սակայն պետք է հստակ նշվեր, թե ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայի որ հասցեի վերաբերյալ տվյալն է ինքնաշխատ լրացվելու, քանի որ հարկ վճարողը կարող է ունենալ իրավաբանական հասցե, գործունեության հասցե, բնակության վայրի հասցե (<< կառավարության 2024 թվականի մարտի 21-ի N 392-Ն որոշմամբ հստակ սահմանված է՝ որ դեպքում որ հասցեի տվյալն է լրացվում):

Միաժամանակ, համակարգի տեխնիկական առաջարկանքին կցվել է ինտերֆեյսային նկարագրություն, որը չի համապատասխանում պահանջներին, մասնավորապես «Գտնվելու վայրը» պարտադիր դաշտ է (որը հայտնի է և նկարագրված է տեխնիկական առաջարկանքի նկարագրությունում), սակայն ինտերֆեյսում այն արացվում է որպես ոչ պարտադիր:

8) N 1 հավելված 1.9. կետով սահմանվել է. «Էլեկտրոնային եղանակով դուրս գրվող ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթուղթը պետք է պարունակի չկրկնվող և սահմանված կարգով գեներացված սերիա և համար (այսուհետ՝ սերիա-համար), որն այդ փաստաթուղթը նույնականացնող հիմնական վավերապայմանն է: Սերիա-համարը պետք է բաղկացած լինի 11 նիշից, որի առաջին նիշը պետք է սկսվի C լատինատառով, իսկ մնացած 10 նիշը պետք է լինեն թվեր»:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջարկանքում բացակայում է N 1 հավելվածի 1.9. կետով նախատեսված ամբողջական, ավարտական, պատշաճ

նկարագրությունները, այդ թվում՝ N 1 հավելվածի 5-րդ կետի Պահանջ 2-ի 3.1.1. կետով նախատեսված գործառնության մանրամասն նկարագրությունը, 3.1.2. կետով նախատեսված ինտերֆեյսային մանրամասն նկարագրությունը:

Ներկայացված համակարգի տեխնիկական առաջարկանքում սերիա-համարը նկարագրված է միայն որպես որոնման արդյունք և այդ նույն որոնման արդյունքի դաշտում նշվել է, որ «Ցուցարկում է գործարքի եզակի նույնականացուցիչը կամ անվանումը՝ Համընդհանուր եզակի նույնացուցիչ) — տվյալների եզակի նույնացման համար նախատեսված 128-բիթանոց արժեք է, որն օգտագործվում է ծրագրավորման, տվյալների բազաների և ցանցային համակարգերի մեջ՝ երաշխավորելու համար, որ յուրաքանչյուր նույնացուցիչ կլինի եզակի ամբողջ աշխարհում» և այդպես էլ չի նկարագրվել, թե ինչպես է գեներացվում սերիա-համարը, մինչդեռ N 1 հավելվածի 1.9. կետում հստակ ձևակերպված է:

9) N 1 հավելվածի 1.10. կետով սահմանվել է. «Էլեկտրոնային եղանակով դուրս գրվող ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթուղթը պարտադիր կավերացվում (հաստատվում) է այդ փաստաթուղթը էլեկտրոնային եղանակով դուրս գրելու և էլեկտրոնային ստորագրությամբ վավերացնելու իրավասություն ունեցող՝ ՀՀ հարկային օրենսգրքի 310-րդ հոդվածի պահանջներին համապատասխան հարկային մարմնի հետ էլեկտրոնային եղանակով հարկային հաշվարկներ, ներկայացնելու մասին պայմանագիր կնքած, ինչպես նաև հարկային մարմնից էլեկտրոնային ծածկագիր և գաղղիսբառ ստացած անձի կողմից»:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական բնութագրում բացակայում է N 1 հավելվածի 1.10. կետով նախատեսված ամբողջական, ավարտական, պատշաճ նկարագրությունները, այդ թվում՝ N 1 հավելվածի 5-րդ կետի Պահանջ 2-ի 3.1.1. կետով նախատեսված գործառնության մանրամասն նկարագրությունը, 3.1.2. կետով նախատեսված ինտերֆեյսային մանրամասն նկարագրությունը:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջարկանքում նշված է միայն հետևյալ՝ «Փաստաթղթերը կարող են ստորագրել հետևյալ անձի».

- Հարկ վճարողներ (<ՀՀՀՀ-ում)
- Փաստաթղթերը կարող են ստորագրվել ՀՀ հարկային օրենսգրքի և կառավարության N1257-Ն որոշման համաձայն:
- Հարկ վճարողները պետք է ունենան էլեկտրոնային ծածկագիր և գաղղիսբառ, որոնք ստացվում են «Էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր» համակարգում գրանցվելու ժամանակ

▪ Օգտվողներ՝
▪ Համակարգում լիազորություններ ունեցող օգտվողները (օրինակ՝ հաշվապահներ կալ ներկայացուցիչներ) կարող են ստորագրել փաստաթղթերը՝ օգտագործելով իրենց էլեկտրոնային ստորագրությունը:

- Լիազորությունները սահմանվում են ՀՆՀՀ համակարգում:
- Կողմերը գործադրում՝
▪ Փաստաթղթերը պետք է ստորագրվեն նաև սրացողի (վաճառողի/ներդնողի) կողմից վավերացման համար»:

Համակարգի տեխնիկական առաջարկանքում նշված «Փաստաթղթերը կարող են ստորագրվել կառավարության N 1257-Ն որոշման համաձայն» նկարագրությունը ճիշտ չէ, քանի որ Պայմանագրով նման պահանջ առկա չէ, իսկ այդ կարգով նկարագրված է ոչ թե

փաստաթղթերի ստորագրման կարգը, այլ «Հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման, անվավեր ճանաչման, չհերքվման կարգը և ոչ էլեկտրոնային եղանակով հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման դեպքերը», որն առնչություն չունի ներդրվող համակարգի հետ:

Համակարգի տեխնիկական առաջադրանքում նկարագրված «Հարկ վճարողները պետք է ունենան էլեկտրոնային ծածկագիր և գաղտնաբառ, որոնք ստացվում են «էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր» համակարգում գրանցվելու ժամանակ» մասը չի համապատասխանում գործող համակարգերին, քանի որ էլեկտրոնային ծածկագիր և գաղտնաբառ ստանում են ոչ թե «էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր» համակարգում, այլ «Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում» հարկային մարմնի հետ համապատասխան պայմանագիր կնքելու դեպքում:

Համակարգի տեխնիկական առաջադրանքում նկարագրված «Համակարգում լիազորություններ ունեցող օգտվողները (օրինակ՝ հաշվապահներ կամ ներկայացուցիչներ) կարող են ստորագրել փաստաթղթերը՝ օգտագործելով իրենց էլեկտրոնային ստորագրությունը:» ձևակերպումը չի նկարագրում ստորագրման անհրաժեշտ և ճիշտ նկարագրությունը, քանի որ համակարգում օգտվողը կարող է ունենալ միայն դիտելու լիազորություն, սակայն չունենալ դուրս գրելու լիազորություն և անկախ հաշվապահ հանդիսանալու հանգամանքից փաստաթուղթ ստորագրելու իրավասություն չունենա: Հստակ նշված չէ, թե ուր տեմպի լիազորությունն է պետք շնորհել օգտվողին, որ կարողանա փաստաթուղթ դուրս գրել (ստորագրել-վավերացնել), մասնավորապես, պետք է նկարագրվել՝ էլեկտրոնային ստորագրություն ունեցող, հարկային մարմնից էլեկտրոնային ծածկագիր և գաղտնաբառ ստացած և հարկային մարմնի համապատասխան էջից («Լիազորի գրասենյակ»-ից, սահմանված է Պահանջ 2.1.-ով) կոնկրետ օգտվողին «Դուրս գրում» լիազորությունը պետք է շնորհվի, որ համակարգից օգտվողը կարողանա փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով դուրս գրի և էլեկտրոնային ստորագրությամբ վավերացնի:

Միաժամանակ, չի նկարագրվել համակարգում համապատասխան լիազորություններ չունեցող օգտվողների մասին, իրենց կողմից կատարվող գործողությունների և համակարգի կողմից կատարվող արձագանքի մասին, քանի որ նշված դեպքերում համակարգը պետք է չբողնի փաստաթղթեր վավերացնել:

Համակարգի տեխնիկական առաջադրանքի «Փաստաթղթերը պետք է ստորագրվեն նաև ստացողի (վաճառող/ներդրողի) կողմից՝ վավերացման համար» նշագրումը չի համապատասխանում պայմանագրի պահանջներին, քանի որ «ստացողը» նույն ապրանքի գնորդն է, ոչ թե «վաճառող/ներդրող»-ը և «ստացողն» ինքն է **դուրս գրում** փաստաթուղթը (ապրանքը վաճառող/ մատակարարող և կանոնադրական կապիտալում գույք ներդրող ֆիզիկական անձի փոխարեն՝ համաձայն վերոնշյալ կառավարության որոշման)՝ էլեկտրոնային ստորագրությամբ վավերացնելով և նկարագրությունում անհավանալի է, թե մյուս կողմը ով էր, որ պետք է ստորագրեր, եթե առկա է միայն մեկ ստորագրող կողմ:

Համակարգի տեխնիկական առաջադրանքում նշվել են ստորագրությանը վերաբերող, որոշ պիսյի հարողագրություններ, սակայն նկարագրված չէ, թե համակարգում օգտվողի որ գործողությունների դեպքում է ցուցադրվում սիսյի հարողագրությունները և դրա արդյունքում հնարավոր է լինեն դեպքեր, որոնց մասով համակարգում նախատեսված չլինեն ստուգումներ: Ընդ որում, դեռևս 14.03.2025 թվականի գրությանը (ուղարկվել է էլեկտրոնային փոստերին) առաջարկվել էր տեխնիկական առաջադրանքում ներառել սիսյի հարողագրությունների աղյուսակ հետևյալ ձևաչափով՝ «Նաև անհրաժեշտ է առանձին աղյուսակով լինի նաև սիսյի

հարողագրությունների ցանկ, այսինքն օգտվողը ինչ գործողություն է անում, սիսյի հարողագրությունը ինչ տեսակի է /տեղեկատվական, թե սիսյի/ և սիսյի հարողագրության բովանդակությունը:»:

Համակարգի տեխնիկական առաջադրանքում սիսյի հարողագրությունների մեծամասնությունը վերաբերում են փաստաթղթերի ստորագրման գործընթացին, այն դեպքում, երբ ստորագրման գործընթացի մասին տեխնիկական առաջադրանք առկա չէ (տե՛ս N 1 հավելվածի 4.1. կետով նախատեսված պահանջը) և ըստ որի՝ պետք է նոր սահմանվեն սիսյի հարողագրությունները:

10) N 1 հավելվածի 1.11. կետով սահմանվել է. «ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով համայնի հարկային ստուգմանը (չափագրմանը) պրոգնված (ուսումնասիրված) կա. համայնի հարկային ստուգման (չափագրման) ընթացքում գրանցող ժամանակաշրջաններին վերաբերող՝ ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթուղթ չի կարող դուրս գրվել, իսկ էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված /դուրս գրված/՝ ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթուղթը ենթակա չէ փոփոխման և հնարավոր է միայն համարել սխալներով դուրս գրված»:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջադրանքում բացակայում է N 1 հավելվածի 1.11. կետով նախատեսված էջի տեխնիկական առաջադրանքը, այդ թվում՝ N 1 հավելվածի 5-րդ կետի Պահանջ 2-ի 3.1.1. կետով նախատեսված գործառնության մանրամասն նկարագրությունը, 3.1.2. կետով նախատեսված ինտերֆեյսային մանրամասն նկարագրությունը:

11) N 1 հավելվածի 1.12. կետով սահմանվել է. «Ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթղթի ձևափեսը սահմանվում է հարկային մարմնի կողմից հաստատված՝ էլեկտրոնային եղանակով այդ փաստաթղթի դուրսգրման ծրագրի նշական տեխնիկական առաջադրանքով:»:

Կատարողի կողմից ներկայացված տեխնիկական առաջադրանքում բացակայում է N 1 հավելվածի 1.12. կետով նախատեսված ամբողջական, ավարտական, պատշաճ նկարագրությունները, այդ թվում՝ N 1 հավելվածի 5-րդ կետի Պահանջ 2-ի 3.1.1. կետով նախատեսված գործառնության մանրամասն նկարագրությունը, 3.1.2. կետով նախատեսված ինտերֆեյսային մանրամասն նկարագրությունը:

N 1 հավելվածի 1.12. կետով նախատեսված պահանջի մասով ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթղթի ձևատեսքը տեխնիկական առաջադրանքով անհրաժեշտ է դիտարկել հետևյալ տեսանկյուններից՝

- դաշտերի նկարագրություն,
- ինտերֆեյս,
- PDF ձևատեսք

Համակարգի տեխնիկական առաջադրանքով դաշտերի նկարագրությունների մասով կան բացթողումներ և թերություններ, մասնավորապես՝

- առաջարկվել էր տեխնիկական առաջադրանքում ներառել փաստաթղթի ինտերֆեյսն ամբողջական տեսքով, այնուհետև դրա յուրաքանչյուր դաշտի մասով նշել նկարագրությունը հերթականությամբ, սակայն այդպես նկարագրված չէ (էջը սկսվում է հետ գնալու նշանով և էջի վերևում առկա այլ գործիքագործիչներով, սակայն փաստաթղթի նկարագրությունը սկսվում է վերնագրից՝ նշված տվյալներից ներքև դաշտից),

▪ մատակարարարման ամսաթիվը պետք է հնարավոր լինի նշել մինչև 3 տարի ետին ամսաթիվով, սակայն հստակ նշված չէ, թե որ ամսաթիվից սկսած է հաշվարկվում 3 տարին, պետք է նշվեր, որ այն գործարքի մասով, որի կատարման օրը **ներառող հարկային տարվանից** անցել է երեք հարկային տարի, փաստաթուղթ չի կարող դուրս գրվել և պետք է համակարգում կատարվեր համապատասխան ստուգում, նաև պետք է ցուցադրվեր սխալի հարյուրադրություն, • N 1 հավելվածի 1.7. կետով սահմանված փաստաթղթերի (սևագիր փաստաթղթերի) տեսակներում նկարագրված չէ ապրանքացանկի աղյուսակում տողերը կրկնօրինակելու, ջնջելու, ավելացնելու հնարավորությունները և դրանց նկարագրությունը,

▪ մանրամասնում չէ 10 դրամի խմբագրման համար նախատեսված կոճակը և դրա գործողությունների նկարագրությունը (10 դրամ խմբագրման կոճակի և դրա գործողությունների մասին մանրամասն նկարագրվել է տեղեկացվել է նաև 2025 թվականի մարտի 12-ին կազմակերպված առցանց հանդիպման ընթացքում),

▪ ստորագրել կոճակի մոտ առաջարկվել էր «Ստորագրել կոճակը - որին սեղմելիս օգտատերը կտրորովի Ստորագրվող փաստաթղթեր բաժին» նախադասությունը ձևակերպել համակարգի նախատեսվող տրամաբանությանը համապատասխան, այն է՝ «Ստորագրել կոճակին սեղմելիս սևագիր փաստաթուղթը կտեղափոխվի ստորագրվող փաստաթղթեր ենթաբաժին և հարկ վճարողին կտանի այդ էջ», սակայն անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի ներդրման փաստաթղթի նկարագրությունում նշված չէ:

Համակարգի տեխնիկական առաջարկանքով ինտերֆեյսի նկարագրության մասով կան բացթողումներ և թերություններ, մասնավորապես՝

▪ գյուղատնտեսական արտադրանքի ձեռքբերման, ապրանքի ձեռքբերման փաստաթղթերում նշված է առաքման ամսաթիվ, սակայն պետք է լիներ մատակարարման ամսաթիվ (տե՛ս ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 21-ի N 392-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 12-րդ կետի 2-րդ ենթակետը),

▪ «Գտնվելու վայր» դաշտը նշվել է որպես ոչ պարտադիր, սակայն պետք է լիներ պարտադիր (տե՛ս ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 21-ի N 392-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 12-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» և «գ» պարբերությունները),

▪ նկարագրվել է «ում միջոցով լիազորագրի համար» դաշտ, սակայն պետք է լիներ «լիազորագրի համար» (տեխնիկական առաջարկանքի նկարագրությունով հայտնի է և պահանջը նկարագրված է, սակայն հաշվի չի առնվել),

▪ ավտոտրանսպորտային միջոցի «մակնիշ և պետհամարանիշ» դաշտերը արտացոլված չեն ինտերֆեյսում (տեխնիկական առաջարկանքի նկարագրությունով հայտնի է և պահանջը նկարագրված է, սակայն հաշվի չի առնվել),

▪ «Ապրանքներ մատակարարող (առաքող) ֆիզիկական անձի տվյալներ» անվանումով պետք է լիներ դաշտը, սակայն դաշտի անվանման մեջ բաց է թողնված ֆիզիկական բառը (տեխնիկական առաջարկանքի նկարագրությունով հայտնի է և պահանջը նկարագրված է, սակայն հաշվի չի առնվել),

▪ ֆիզիկական անձի անձը հաստատող փաստաթուղթ, սերիա և/կամ համար դաշտերը պարտադիր են լրացման համար, սակայն նշված է որպես ոչ պարտադիր (տե՛ս ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 21-ի N 392-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 12-րդ կետի 4-րդ ենթակետը),

▪ անոպ չէ փաստաթղթերի ապրանքացանկի աղյուսակում տողերը ջնջելու տեսքը,

▪ Երբ երկրների ցանկից ընտրված չէ ՀՀ-ն, ապա պետք է «մարզ, համայնք.....» ձևաչափի փոխարեն արտացոլվի «Հասցե» դաշտը, սակայն անոպ չէ ինտերֆեյսում,

▪ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի **ներդրման** փաստաթղթի ինտերֆեյսում նշվել է «Ապրանքներ ձեռք բերող կազմակերպության տվյալներ», սակայն պետք է նշվեր «Կազմակերպության տվյալներ», բանի որ փաստաթուղթը ապրանքների ձեռքբերման մասին չէ, այլ գույքի ներդրման (տեխնիկական առաջարկանքի նկարագրությունով հայտնի է և նկարագրված է պահանջը, սակայն հաշվի չի առնվել),

▪ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի **ներդրման** փաստաթղթի ինտերֆեյսում նշվել է «Ապրանքներ մատակարարող (առաքող) անձի տվյալներ», սակայն պետք է լիներ «Ներդրող ֆիզիկական անձի տվյալներ», բանի որ փաստաթուղթը ապրանքների ձեռքբերման մասին չէ, այլ գույքի ներդրման (տեխնիկական առաջարկանքի նկարագրությունով հայտնի է և նկարագրված է պահանջը, սակայն հաշվի չի առնվել),

▪ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի **ներդրման** փաստաթղթի ինտերֆեյսում պետք է արտացոլվեր «ՀՀ / ՀՀՀ չունենալու վերաբերյալ տեղեկանք», «Անձը հաստատող փաստաթուղթ», «Սերիա և/կամ համար», «Բնակության վայրի հասցե» դաշտերը, սակայն անոպ չեն,

▪ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի **ներդրման** փաստաթղթի ինտերֆեյսում «Ներդրող ֆիզիկական անձի տվյալներ»-ի (այսինքն ներկայիս ինտերֆեյսում՝ «Ապրանքներ մատակարարող (առաքող) անձի տվյալներ»-ի) հատվածում կան «Ում միջոցով լիազորագրի համար, մատակարարման եղանակ» դաշտերը, որոնք նախատեսված չեն տեխնիկական առաջարկանքով,

▪ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի **ներդրման** փաստաթղթի ինտերֆեյսում ապրանքացանկի աղյուսակի ինտերֆեյսում նշված է «Ձեռք բերվող ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկ», մինչդեռ պետք է լիներ «Ներդրվող գույքի քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկ»:

Համակարգի տեխնիկական առաջարկանքով PDF ձևատեսքի մատով ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթղթի **PDF ձևատեսքն** իր բովանդակությամբ չի համապատասխանում ՀՀ հարկային օրենսգրքի և ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 21-ի N 392-Ն որոշմամբ սահմանված փաստաթղթում ներառվող տվյալներին (N1 հավելվածի «Նպատակը» մասում նշված է, որ հայտով ներկայացված փոփոխությունները պետք է իրականացվեն իրավական ակտերին համապատասխան), ինչպես օրինակ՝

▪ փաստաթղթի անվանումը վերնագրվել էր «հարկային հաշիվ», մինչդեռ այդ փաստաթուղթը չի կարող համարվել հարկային հաշիվ և վերոնշյալ իրավական ակտերին համապատասխան այն օրենսդրությամբ սահմանված կարգով կազմվող հաշվարկային փաստաթուղթ (հարկային հաշիվը հաշվարկային փաստաթղթի տեսակ է՝ ՀՀ հարկային օրենսգրքը, 55-րդ հոդված) չհամարվող այլ փաստաթուղթ է (այդ մասին տեղեկացվել է նաև 12.03.2025 թվականին կազմակերպված առցանց հանդիպման ընթացքում),

■ փաստաթղթերում նախատեսվել են ճշգրիտ հաշվի ստեղծում, ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ դաշտեր, այն դեպքում, երբ տվյալ փաստաթղթի համար վերոնշյալ իրավական ակտերով ճշգրտումն առիմանված չէ,

■ «ապրանք մատակարարող (առաջող) անձի տվյալներ» հաստատվածում ՀՀ-ը դաշտի համար փաստաթղթերից մեկում նախատեսվել է 4 վարդակ, իսկ մյուսում ընդհանրապես չեն վարդակներ չեն նշվել, մինչդեռ ֆիզիկական անձի ՀՀ-ն հստակ է և կազմված է 10 նիշից,

▪ ասլոմբ մատակարարող ֆիզիկական անձի անուն, ազգանվան դաշտը անվանվել է «Անվանում», սակայն ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 21-ի N 392-Ն որոշմամբ հստակ սահմանված է, որ պետք է փաստաթղթում ներառվի «Անուն, ազգանուն»-ը,

■ ապրանք մատակարարող ֆիզիկական անձի հասցեի դաշտը նշվել է «Գտնվելու վայր (հասցե)», միջոց վերոնշյալ որոշմանը հստակ պետք է լինեն «Ընկալության վայրի հասցե»,

«ապրանք մատակարարող ֆիզիկական անձի համար պետք է նախատեսվեր անձնագիր (կամ անձը նույնականացնող այլ փաստաթղթի) սերիան և (կամ) համարը տվյալներով դաշտ, որը վրա ձևավորվածում»:

▪ «ապրանք ձեռք բերող անձի տվյալներ» հատկաձուռ նշվել են «անձը հաստատող փաստաթուղթ, սերիալ և/կամ համար, ՀՇՀ» տվյալները, մինչդեռ ապրանք ձեռք բերողը չի կարող ֆիզիկական անձ լինել և ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 21-ի N 392-Ն որոշման շրջանակում ապրանք ձեռք բերողը կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր է,

«Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համար» դաշտում նախատեսված է, որ այդ դաշտում ՀՀՀՀ-ն լրացվելու է հետևյալ կերպ՝ ԱԱՀ վճարողի հաշվառման համարը ՀՀՀՀ-ն է, որի վերջում ավելացված է թեք գիծ և «1» թվային նիշը (ՀՀ հարկային օրենսգրիք, հոդված 292), պետք է ձևաւորուի հստակ նշվել թեք գիծը,

▪ փաստաթղթերի ձևատեսքում ապրանքի կամ գույքի ներդրման հաշվարկային մասում նշվել են «Հեղձ (%)» Այդ թվում՝ բնագ. հարկ, Այդ թվում՝ ակցիզ, հարկի գումարը» դաշտերը, որոնք չպետք է լինեն փաստաթղթում (այդ մասին տեղեկացվել է նաև 12.03.2025 թվականին կազմակերպված առցանց հանդիպման ընթացքում),

[illegible]

■ անհատ ձեռնարկատերեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի ներդրման փաստաթուղթում նշվել է «Ապրանքներ ձեռք բերող անձի տվյալներ» մինչդեռ կազմակերպությունը ոչ թե ապրանք է ձեռք բերում, այլ այդ կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույք է ներդրում և պետք է նշվեր «Կազմակերպության տվյալներ» (որը հայտնի է և նկարագրված է ներդրում և պետք է նշվեր «Կազմակերպության տվյալներ» (որը հայտնի է և նկարագրված է տվյալ տեսակի փաստաթուղթի մասին տեղեկական առաջադրանքի նկարագրությունում),

«Ապրանք նատակարաղ (առաքող) անձի տվյալներ» և «ապրանք ձեռք բերող անձի տվյալներ» հատվածները նշվել են հակառակ դիրքերով, որը չի համապատասխանում տեխնիկական առաջարկներով նկարագրված հերթականությանը և բացի այդ դրանցում պարունակվող տրամաբանական տվյալներն էլ են հակառակ նշված (օրինակ՝ ապրանք ձեռք

19

բերորը կազմակերպությունը կամ ԱՀ-ն է, սակայն այդ տվյալներում նախատեսվել են ՀՀ-ի, անձնագրի դաշտ, իսկ ապրանք մատարարորդ ֆիզիկական անձի հատվածում նշված է անձնագրի դաշտ),

■ անհատ ձեռնարկատեր և նոտար ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (քաժեմեակալաք) կապիտալում գույքի ներդրման փաստաթուղթում հաշվարկային մասում արդյուտակ անունը նշվել է «Մատախարարկոլ (ստաթիկոլ) ապրանքների քանակի և փերան նիթակա գումարի հաշվարկ», մինչդեռ սա ապրանքի նմատուկումն փաստաթուղթում չէր, այլ գույքի ներդրման և անվանումը պետք է համապատասխաներ նաու տեխնիկական առաջնարկի սահմանված սահմանմանը՝ «Ներդրվող գույքի քանակի և եթեթուման երթումի հաշվարկ»,

«անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի ներդրման փաստաթուղթում նշվել է «Տարա*» դաշտը և ձևատեսքում նախատեսվել է հետևյալ երևացող տեքստը՝ «* Տարա պյունակը լրացվում է այն դեպքում, երբ տարան չի օտարվում», իսկ այդ փաստաթուղթը կանոնադրական ասպարանքների մատակարարման դեպքում, իսկ այդ փաստաթուղթը կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի ներդրման մասին է, այլ ոչ ապրանքի մատարարարման, (բաժնեհավաք) կապիտալում գույքի ներդրման և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի ներդրման փաստաթուղթում չի նկարագրվել «ալիտոտեսակաբարտային միջոցի մակնիշ և պետհամարակիշ» դաշտերը, մինչդեռ պետք է լինեն (որը հայտնի է և նկարագրված է տվյալ տեսակի փաստաթղթի մասին տեխնիկական արտացոլումների նկարագրությունում),

[illegible]

▪ փաստաթղթերում նախատեսվել է ավարտքն առաջարկել և ստորագրությունը, անունը, ազգանունը) հատված, մինչդեռ վերոնշյալ իրավական ակտերին հակասում է՝ չի կարող ֆիզիկական անձը դուրս գրել տվյալ տեսակի փաստաթղթերը, ուստի իր փոխարեն դուրս է գրում ավարտք ձեռք բերող կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը, նկարագրված չէ այն դեպքը, երբ արդեն դուրս գրված PDF փաստաթղթի գեներացման ժամանակ փաստաթղթի վերնամասը ինչպես է արտացոլվելու (մինչ դուրս գրելը փաստաթուղթը սևագիր է, դուրս գրելուց հետո ստանում է սերիա-համար և պետք է արտացոլվի, սերիա-համարը պետք է արտացոլվի նաև սխալներով դուրս գրված համարեուց հետո)։

12) N 1 հավելվածի 1.13. կետով սահմանվել է. «Ֆիզիկական անձից ձեռքբերման լրացված փաստաթուղթերը չի կարող վավերացվել (ստորագրվել), եթե դրանում լրացված չեն պարտադիր տրաման եմբակա ունեցող տվյալ (սևաշագանակ)»:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջադրանքն առաջադրում է N 1 հավելվածի 1.13 կետով նախատեսված էջի տեխնիկական առաջադրանքը, այդ թվում՝ N 1 հավելվածի 5-րդ կետի Պահանջ 2-ի 3.1.1. կետով նախատեսված գործառնության մանրամասն նկարագրություն, 3.1.2. կետով նախատեսված ինտերֆեյսային մանրամասն նկարագրություն:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջարկանքում նկարագրված չէ, թե համակարգը որ դաշտերի մասով է ստուգումներ կատարում, ինչ հնարավոր դեպքեր կարող են առաջանալ և ինչպիսի սխալի հարողդագրություններ պետք է ցուցադրի: Ընդ որում՝ դեռևս 2025 թվականի մարտի-14-ի գրությանը (ուղարկվել է էլեկտրոնային փոստերով) առաջարկվել էր տեխնիկական առաջարկանքում ներառել սխալի հարողդագրությունների աղյուսակ հետևյալ ձևաչափով՝ «Նաև անհրաժեշտ է առանձին աղյուսակով լինի նաև սխալի հարողդագրությունների ցանկ, այսինքն օգտվողը ինչ գործողություն է անում, սխալի հարողդագրությունը ինչ տեսակի է /տեղեկատվական, թե սխալի/ և սխալի հարողդագրության բովանդակությունը»:

Պարտադիր լրացվող դաշտերը սահմանված են ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 21-ի N 392-Ն որոշմամբ և պետք է համապատասխանեն որոշման պահանջներին:

Համակարգի կողմից պետք է կատարվեն օրինակ հետևյալ ստուգումները, որոնք նկարագրված չեն՝

▪ պետք է նկարագրվեր, որ այն գործարքի մասով, որի **կատարման օրը ներառող հարկային տարվանից** անցել է երեք հարկային տարի, փաստաթուղթ չի կարող դուրս գրվել և պետք է համակարգում կատարվեր համապատասխան ստուգում (որը հայտնի է և նկարագրված է տեխնիկական առաջարկների փաստաթղթի տեսակների նկարագրությունում և կարող էր սխալի հարողդագրությունը ևս նկարագրվել),

▪ «Մատակարարման ամսաթիվ» դաշտում պետք է ստուգվեր, որ ամսաթիվը չի կարող ավելի վաղ նշվել, քան հարկ վճարողի գրանցման ամսաթիվն է (որը հայտնի է և նկարագրված է տեխնիկական առաջարկների փաստաթղթի տեսակների նկարագրությունում և կարող էր սխալի հարողդագրությունը ևս նկարագրվել),

▪ երբ $ԱԱ < Վ < Հ$ դաշտում $ԱԱ < Վ < Հ$ -ն չի լրացվել (ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը) և հարկ վճարողը մատակարարման ամսաթվի դրությամբ համարվում է $ԱԱ < Վ$ վճարող և հակառակը: Այս դեպքերում պետք է նաև համակարգը չթողներ փաստաթղթի դուրս գրումը, քանի դեռ չէր համապատասխանեցվել պահանջին,

- երբ պարտադիր լրացման ենթակա դաշտերը դատարկ են,
- երբ ապրանքացանկի աղյուսակում պարտադիր դաշտեր լրացված չեն,
- երբ ապրանքի քանակ դաշտում լրացվել է բացասական թիվ կամ 0,
- երբ ներդրման փաստաթուղթում միավորի գին և արժեք դաշտում լրացվել է 0,
- երբ ընդամենը արժեք դաշտում լրացվել է 0,

▪ պետք է նկարագրվերին անձնագրային ստուգումներ (այդ մասին տեղեկացվել է նաև 2025 թվականի մարտի 12-ին կազմակերպված առցանց հանդիպման ընթացքում), ինչպես օրինակ՝

- արդյոք լրացված ՀՇՀ-ն համապատասխանում է տվյալ անձնագրին, թե ոչ,
- արդյոք լրացված ՀՇՀ-ն գոյություն ունի, թե ոչ,
- արդյոք անձնագիրը ժամկետանց է, թե ոչ,

▪ արդյոք անձնագրի տեսակին համապատասխանող տվյալը (սերիա-համարը) համապատասխանում է ձևաչափին, թե՛ ոչ և սխալի դեպքում յուրաքանչյուր տեսակի փաստաթղթին համապատասխան ցուցադրեր հարողդագրություն,

- պետք է կատարեր ՀՀ քաղաքացի լինելու կամ չլինելու ստուգում:

Եվ այլ բազմաթիվ դեպքեր, որոնց մասով անկա չէ նկարագրություն և համապատասխան սխալի հարողդագրություն:

Նկարագրված չեն նաև այն հնարավոր դեպքերն ու սխալի հարողդագրությունները, որոնք հարկ վճարողին պետք է ցուցադրվեն XML ֆայլը բեռնելիս (նույն ստուգումները պետք է կատարվեն նաև API-ների միջոցով (համակարգին ինտեգրված այլ ծրագրերի միջոցով) հաշվարկային փաստաթղթերի ստեղծման ժամանակ):

13) N 1 հավելվածի 1.14. կետով սահմանվել է. «Ներիա-համարից բացի, ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթուղթում պարտադիր ներառվում են նաև՝ փաստաթղթի դուրսգրման ամսաթիվը, ապրանքի մատակարարման ամսաթիվը, գործարքի առարկա հանդիսացող ապրանքի անվանացանկն ու քանակը, ապրանքի միավորի գինը, ընդհանուր արժեքը, ապրանք մատակարարող՝ անհատ ձեռնարկատեր կամ նույնպես չհամարվող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրի հասցեն, անձնագրի (կամ անձը նույնականացնող այլ փաստաթղթի) սերիան և (կամ) համարը, առկայության դեպքում ($<Հ$ քաղաքացիների համար պարտադիր)՝ հանրային ծառայության համարանիշը (այսուհետ՝ ՀՇՀ) կամ ՀՇՀ չունենալու մասին տեղեկանքի համարը, ինչպես նաև առկայության դեպքում $<Վ < Հ$ -ն, ապրանք ձեռք բերող՝ հարկ վճարողի հաշվառման համարը, իսկ ավելացված արժեքի հարկ վճարողների դեպքում՝ նաև ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը, կազմակերպության լրիվ անվանումը, գրենվելու վայրը, ապրանքների նշանակման վայրի հասցեն, պաշտոնադար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, բնակության վայրի հասցեն, «անհատ ձեռնարկատեր» կամ «ԱԶ» նշումը, ապրանքների նշանակման վայրի հասցեն, պաշտոնադար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը»:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջարկանքում բացակայում է N 1 հավելվածի 1.14. կետով նախատեսված ամբողջական, ավարտական, պատշաճ նկարագրությունները, այդ թվում՝ N 1 հավելվածի 5-րդ կետի Պահանջ 2-ի 3.1.1. կետով նախատեսված գործառնության մանրամասն նկարագրությունը, 3.1.2. կետով նախատեսված ինտերֆեյսային մանրամասն նկարագրությունը:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջարկանքում նկարագրված չէ, որ փաստաթղթերում պարտադիր ներառվում են նաև՝

- դուրսգրման ամսաթիվը և դրա մանրամասները,
- «ապրանքի մատակարարման ամսաթիվը» դաշտը թեև ներառված է տեխնիկական առաջարկանքի նկարագրությունում (իսկ ինտերֆեյսում նշված է առաքման ամսաթիվ, սակայն պետք է լիներ մատակարարման ամսաթիվ), սակայն նկարագրված չէ, թե կոնկրետ որ ամսաթիվի պետք է 3 տարի ետին ամսաթիվ թույլատրվի դուրս գրել, փաստաթուղթը, պետք է նկարագրվեր, որ այն գործարքի մասով, որի **կատարման օրը ներառող հարկային տարվանից** անցել է երեք հարկային տարի, փաստաթուղթ չի կարող դուրս գրվել և պետք է համակարգում կատարվեր համապատասխան ստուգում, նաև պետք է ցուցադրվեր սխալի հարողդագրություն,

▪ «գործարքի առարկա հանդիսացող ապրանքի ընդհանուր արժեքը» հաշվարկման նկարագրությունը թերի է, մասնավորապես արժեքի հաշվարկմանը մասնակցում է նաև «տարա» դաշտի արժեքը և պետք է արժեքի հաշվարկման բանաձևում հաշվի առնվեր այն դեպքը, երբ լրացված է տարա դաշտը և նշվեր նաև հետևյալ բանաձևը՝ «Լրժեք» = «Քանակ» * «Միավորի գին» - «Տարա», սակայն նշված չէ,

- «ապրանք մատակարարող՝ անհատ ձեռնարկատեր կամ նույնպես չհամարվող ֆիզիկական անձի անունը, ազգանունը» պահանջի մասով ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթղթի PDF

ձևատեսքում ֆիզիկական անձի անուն, ազգանվան դաշտը անվանվել է «Անվանում», սակայն հստակ վերոնշյալ որոշմամբ սահմանված է, որ պետք է լինի «Անուն, ազգանուն»,

- փաստաթղթի PDF ձևատեսքում ապրանք մատակարարող ֆիզիկական անձի դեպքում նշվել է «Գտնվելու վայր (հասցե)» անվանումով դաշտ, մինչդեռ վերոնշյալ որոշմամբ հստակ սահմանված է, որ պետք է լինեն «Բնակության վայրի հասցե»,

- փաստաթղթի PDF ձևատեսքում առկա չէ ապրանք մատակարարող՝ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհամարվող ֆիզիկական անձի «անձնագրի (կամ անձը նույնականացնող այլ փաստաթղթի) սերիան և (կամ) համարը» դաշտը, մինչդեռ նշված դաշտերը պետք է լինեն,

- «ապրանք ձեռք բերող անձի տվյալներ» հատվածում հավատարմ է, նշվել են «անձը հաստատող փաստաթուղթ, սերիա և/կամ համար, ՀՇՀ» տվյալները, մինչդեռ ապրանք ձեռք բերողը չի կարող ֆիզիկական անձ լինել և վերոնշյալ իրավական ակտի (որոշման) շրջանակում ապրանք ձեռք բերողը կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր է, ինչպես նաև ապրանք ձեռք բերողի համար այդ դաշտերը վերոնշյալ որոշմամբ սահմանված չէ որ պետք է լրացվեն,

- ապրանք մատակարարող՝ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհամարվող ֆիզիկական անձի՝ առկայության դեպքում (ՀՀ քաղաքացիների համար պարտադիր)՝ հանրային ծառայության համարանիշը (այսուհետ՝ ՀՇՀ) կամ ՀՇՀ չունենալու մասին տեղեկանքի համարը՝ N1 հավելվածի 1.14. կետով սահմանված պահանջի մասով «ապրանք մատակարարող (առաքող) անձի տվյալներ» հատվածում PDF ձևատեսքում ՀՇՀ դաշտի համար փաստաթղթերից մեկում նախատեսվել է 4 վանդակ, իսկ մյուսում ընդհանրապես վանդակներ չեն նշվել, մինչդեռ ֆիզիկական անձի ՀՇՀ-ն հստակ է և կազմված է 10 նիշից:

Միաժամանակ համակարգի տեխնիկական առաջադրանքում հստակ նկարագրված չէ, թե ՀՀ քաղաքացիներին համակարգն ինչպես է տարբերակելու, որպեսզի հնարավոր լինի տարանջատել ՀՇՀ-ն պարտադիր է լինելու լրացման համար, թե՛ ոչ: Ուստի Կատարողը կարող էր առաջարկել (այդ մասին տեղեկացվել է նաև 2025 թվականի մարտի 12-ին կազմակերպված առցանց հանդիպման ընթացքում) հետևյալ լուծումները՝

- պայմանական «ՀՀ քաղաքացի» անունով նշիչ, որը նշելու դեպքում պարտադիր կլիներ լրացնել ՀՇՀ դաշտը կամ
- կարող էր անձնագրերի տեսակներից կախված ստուգվել դաշտի լրացման պարտադիրությունը:

Միաժամանակ համակարգի կողմից նախատեսված չեն անձնագրային տվյալների ստուգման դեպքերը և սխալի հաղորդագրությունները, օրինակ՝ եթե օգտվողի կողմից լրացվել է ժամկետանց անձնագրի տվյալ, այդ դեպքում համակարգն ինչ պետք է անի և այլ դեպքեր:

Անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի **ներդրման** փաստաթղթի տեխնիկական առաջադրանքում նկարագրված է, որ ՀՇՀ-ն «ՀՀ քաղաքացիների համար պետք է լրացվի պարտադիր, բացառությամբ՝ Փաստաթուղթը վերաբերում է անձի, որը չի հասել ՀՇՀ ստանալու տարիքին», մինչդեռ ՀՇՀ ունենալը տարիքով չէ պայմանավորված:

Նկարագրված չէ այն դեպքը, երբ ՀՇՀ-ն չի լրացվում, ապա համակարգը ինչպես է ստուգելու արդյոք չպետք է լրացնել: Մասնավորապես կարող էր առաջարկվել հետևյալը՝

- որ պետք է պայմանական «ՀՀ քաղաքացի» անունով նշիչը նշվել կամ
- կարող էր անձնագրերի տեսակներից կախված համակարգի կողմից ստուգվել դաշտի լրացման պարտադիրությունը:

Անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի **ներդրման** փաստաթղթի ինտերֆեյսի նկարագրության մասով «ՀՇՀ/ ՀՇՀ չունենալու վերաբերյալ տեղեկանք», «Անձը հաստատող փաստաթուղթ», «Սերիա և/կամ համար», «Բնակության վայրի հասցե» դաշտերը պետք է արտացոլվելին, սակայն առկա չեն, իսկ մյուս փաստաթղթերում ինտերֆեյսում թեև արտացոլված են «ՀՇՀ/ ՀՇՀ չունենալու վերաբերյալ տեղեկանք», «Անձը հաստատող փաստաթուղթ», «Սերիա և/կամ համար», «Բնակության վայրի հասցե» դաշտերը, սակայն պետք է նշվեր որպես պարտադիր դաշտեր (ՀՇՀ-ի դեպքում պայմանից կախված), սակայն նշված են ոչ պարտադիր:

N 1 հավելվածի 1.14. կետով սահմանված «ձեռքբերման փաստաթղթում պարտադիր ներառվում են նաև ապրանք մատակարարող ֆիզիկական անձի ՀՇՀ-ն՝ առկայության դեպքում», պահանջի մասով նկարագրված չէ ոչ համակարգի տեխնիկական առաջադրանքում, ոչ ինտերֆեյսում, ոչ էլ PDF ֆայլում:

Համակարգի տեխնիկական առաջադրանքում N 1 հավելվածի 1.14. կետով սահմանված «Ապրանք ձեռք բերող՝ հարկ վճարողի ավելացված արժեքի հարկ վճարողների դեպքում պարտադիր լրացվում է նաև ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը» պահանջի մասով դաշտի նկարագրությունը թերի է: Մասնավորապես՝ նշված չէ ԱԱՀ-ՀՀ դաշտի ձևաչափը, որը պետք է լինեն՝ ԱԱՀ վճարողի հաշվառման համարը ՀՇՀ-Հ-ն է, որի վերջում ավելացված է թեք գիծ և «1» թվային նիշը (ՀՀ հարկային օրենսգրգիդը, հոդված 292), որը հաշվի առնված չէ նաև փաստաթղթի PDF ձևատեսքում (պետք է ձևատեսքում հստակ նշվեր թեք գիծը),

Համակարգի տեխնիկական առաջադրանքում ԱԱՀ-ՀՀ դաշտի պարտադիր/ոչ պարտադիր լինելու նկարագրությունում նշվել է, որ «դաշտը չի լրացվում հետևյալ դեպքերում Գործում է պարզեցված հարկման համակարգով (պատահաբար, միկրոձեռնարկություն, գյուղատնտեսական արտադրող) և չի գրանցված որպես ԱԱՀ վճարող»:

Մինչդեռ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ հարկային օրենսգրքով պարզեցված համակարգ չկա, կա հստակ համակարգ, որի մեջ մտնում են միկրոձեռնարկատիրության և շրջհարկի համակարգերը, նաև ԱԱՀ վճարող չեն այլ «հարկման ռեժիմ»-ում գտնվողները:

Եկտուհետև շարունակվում է համակարգի տեխնիկական առաջադրանքի նույն մասի վերաբերյալ նկարագրությունը՝ «Փոքր և միջին բիզնեսի համար կան հարկային ռեժիմներ, որոնք ազատում են ԱԱՀ վճարումից՝ սահմանաչափից ցածր եկամուտ ունենալու դեպքում, Եթե գործունեությունը ազատված է ԱԱՀ-ից՝ առողջապահական, կրթական կամ սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպություններ, որոնց գործունեությունը օրենքով ազատված է ԱԱՀ-ից, Եթե կազմակերպությունը նոր է ստեղծվել և դեռ չի անցել ԱԱՀ գրանցում, Եթե ընկերությունը դեռ չի հասել ԱԱՀ գրանցման շեմին (օրինակ՝ տարեկան շրջանառությունը չի գերազանցում սահմանված չափը), այն կարող է չունենալ ԱԱՀ-ՀՀ, Եթե կազմակերպությունը գրանցված է որպես ֆիզիկական անձ-ձեռնարկատեր Որոշ դեպքերում անհատ ձեռնարկատերերը կարող են ունենալ ՀՇՀ»:

Նշված հատվածում նկարագրված են նշված դաշտի լրացման հետ կապ չունեցող արտահայտություններ, իսկ ԱՀ-ները բոլոր դեպքերում պետք է ՀՇՀ-ն ունենան, չի կարող լինել ԱՀ, որը ՀՇՀ-Հ չունի, պետք է պարզապես նշվել, որ ստուգվելու է ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայում ԱԱՀ վճարող լինել, չլինելը և ըստ դրա լրացվելու է տվյալը:

Եկտուհետև շարունակվում է համակարգի տեխնիկական առաջադրանքի նույն մասի վերաբերյալ նկարագրությունը՝ «բայց չլինել ԱԱՀ վճարողներ՝ կախված իրենց հարկային ռեժիմից, Եթե գործունեությունը չի ենթարկվում ԱԱՀ-ի, Օրինակ՝ առանձին տեսակի ապրանքներ կամ

ծառայություններ (օրենքով արտոնյալ կատեգորիաներ), Կարևոր նշում. ՀՀ-ՀՀ-ն օգտագործվում է բոլոր հարկային գործառնությունների համար, իսկ ԱԱՀ-ՀՀ-ն միայն ԱԱՀ-ի հետ կապված հաշվառման և հաշվետվությունների համար: Եթե կազմակերպությունը չունի ԱԱՀ-ՀՀ, նա չի կարող ԱԱՀ հանել գնումներից կամ գանձել այն վաճառքից (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի): Առկա է տարբերություն երկրների հարկային օրենսդրություններում, ուստի խորհուրդ է տրվում հաստատել տեղական հարկային մարմնի հետ»:

Նշված հարվածում նկարագրված են ԱԱՀ-ՀՀ դաշտի լրացման հետ կապ չունեցող արտոնյալություններ. ՀՀ հարկային օրենսգրքով նման սահմանումներ չկան, պարզապես պետք է նկարագրվեն, որ անհրաժեշտ է տեղեկատվական բազայից վերցնել հարկ վճարողի մատակարարման ամսաթվի դրությամբ ԱԱՀ վճարող համարվելու տվյալը և արտացոլել կամ չարտացոլել տվյալներում. ոչ թե նկարագրվեն երբ է հարկ վճարողը համարվում ԱԱՀ վճարող կամ որ գործունեությունը ԱԱՀ-ով չի հարկվում. այն էլ ՀՀ հարկային օրենսդրությունը չհատմանամբ, միաժամանակ պետք է նկարագրվեն, որ համակարգը պետք է կատարվի ԱԱՀ վճարող համարվելու ամսաթվերի ստուգում և նախատեսվող բոլոր հնարավոր դեպքերը. օրինակ՝ երբ հարկ վճարող չէր համարվել ԱԱՀ վճարող և այդ ընթացքում սկզբի փաստաթուղթ էր կազմել, իսկ դուրս գրման պահին մատակարարման ամսաթվի դրությամբ արդեն ԱԱՀ վճարող է համարվում կամ հավատարկ դեպքը. այս դեպքերում համակարգը պետք է հարդորագրություն տար և հարկ վճարողին ուղղորդեն, որ թաքմանցի փաստաթուղթը դրանում ԱԱՀ-ՀՀ դաշտը լրացնելու համար:

N 1 հավելվածի 1.14. կետով սահմանված «փաստաթղթում պարտադիր լրացվում են ապրանք ձեռք բերող՝ կազմակերպության լրիվ անվանումը, գտնվելու վայրը, ապրանքների նշանակման վայրի հասցեն, պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, բնակության վայրի հասցեն, «անհատ ձեռնարկատեր» կամ «ԱԶ» նշումը, ապրանքների նշանակման վայրի հասցեն, պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը» պահանջի մասով տեխնիկական առաջադրանքում նկարագրված է, որ

«Գտնվելու վայրը» հասցեի մասով՝ «Պետք է արտացոլվի մուտք գործած օգտատիրոջ ապրանք ձեռք բերող անձի/կազմակերպության համակարգում գրանցված հասցեն»:», սակայն պետք է հստակ նշվեր, թե ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայի որ հասցեի վերաբերյալ տվյալն է ինքնաշխատ լրացվելու, քանի որ հարկ վճարողը կարող է ունենալ իրավաբանական հասցե, գործունեության հասցե, բնակության վայրի հասցե: Միաժամանակ, նշված պահանջով և վերոնշյալ կարավարության որոշմամբ հստակ սահմանված են կազմակերպության և ԱԶ-ի համար որ հասցեների տվյալներն են լրացվելու, սակայն պահանջը հաշվի առնված չէ:

«Ինտերֆեյսային նկարագրությունը և» չի համապատասխանում պահանջներին՝ մասնավորապես պահանջով «Գտնվելու վայրը» սահմանված է որպես պարտադիր դաշտ, սակայն ինտերֆեյսում այն արացրված է որպես ոչ պարտադիր,

«Ինտերֆեյսային նկարագրության մեջ արտացոլված չէ այն դաշտը, երբ երկրների ցանկից ընտրված չէ ՀՀ-ն, այս դեպքում պետք է «մարզ, համայնք.....» ձևաչափի փոխարեն արտացոլվի «Հասցե» դաշտը:

«Փաստաթղթերում նախատեսվել է ապրանքն առաքողի ստորագրության (ստորագրությունը, անունը, ազգանունը) հատված, մինչդեռ վերոնշյալ իրավական ակտերին հակասում է չի կարող ֆիզիկական անձը դուրս գրել տվյալ տեսակի փաստաթղթերը, ուստի իր փոխարեն դուրս է գրում ապրանք ձեռք բերող կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը

և համապատասխանաբար ստորագրությունը ապրանքը ձեռք բերողի համար է միայն պարտադիր:

Միաժամանակ, բացի այն, որ նկարագրված չեն համակարգի կողմից կատարվող տրանսբանական ստուգումները և դրանց արդյունքում ցուցադրվող վիճակի հարդորագրությունները, նկարագրված չեն նաև այն հնարավոր դեպքերն ու վիճակի հարդորագրությունները, որոնց հարկ վճարողին պետք է ցուցադրվեն XML ֆայլը բեռնելիս (Նույն ստուգումները պետք է կատարվեն նաև API-ների միջոցով (համակարգին ինտեգրված այլ ծրարգերի միջոցով) հաշվարկային փաստաթղթերի ստեղծման ժամանակ), ինչպես օրինակ՝

- Եթե ՀՀ-ՀՀ դաշտում լրացվել է գոյություն չունեցող ՀՀ-ՀՀ,
- Եթե պարտադիր լրացման ենթակա դաշտը դատարկ է,
- Երբ դաշտում մուտքագրվում է սահմանված իրիցից ավել քանակի իր,
- Երբ մուտքագրվում է դաշտում ճիշդապես սահմանված իրիցից տարբերվող իրի և այլ բազմաթիվ դեպքեր:

Ընդ որում, դեռևս 2025 թվականի մարտի 14-ի գրությամբ (ուղարկվել է էլեկտրոնային փոստերին) առաջարկվել էր տեխնիկական առաջադրանքում ներառել վիճակի հարդորագրությունների արդյունակ հետևյալ ձևաչափով՝ «Նաև անհրաժեշտ է առանձին արդյունակով լինի նաև վիճակի հարդորագրությունների ցանկ, այսինքն օգտվողը ինչ գործողություն է անում, վիճակի հարդորագրությունը ինչ տեսակի է /տեղեկատվական, թե սխալի/ և վիճակի հարդորագրության բովանդակությունը»:

14) N 1 հավելվածի 1.15. կետով սահմանվել է: «Միաժամանակ, նախքան հաշվարկային փաստաթղթի դուրս գրելը պետք է որոշ դեպքերում հնարավոր լինի իրականացնել ապրանք մատակարարող՝ անհար ձեռնարկատեր կամ նույնպիսի չհանարկող ֆիզիկական անձի տվյալների արդյուն ՀՀ ռադիկանության տվյալների հետ»:

Բացակայում է N 1 հավելվածի 1.15. կետով նախատեսված տեխնիկական առաջադրանքը, այդ թվում՝ N 1 հավելվածի 5-րդ կետի Պահանջ 2-ի 3.1.1. կետով նախատեսված գործառնությունն աննրանման նկարագրությունը, 3.1.2. կետով նախատեսված ինտերֆեյսային մանրամասն նկարագրությունը:

Հարկ է նշել, որ գոյություն ունեցող համակարգի տեխնիկական առաջադրանքում ոչ մի նկարագրություն առկա չէ: Մասնավորապես՝ համակարգը պետք է կատարեր անձնագրային ստուգումներ (այդ մասին տեղեկացվել է նաև 2025 թվականի մարտի 12-ին կազմակերպված առցանց հանդիպման ընթացքում)

- արդյոք լրացված ՀՀ-ն համապատասխանում է տվյալ անձնագրին, թե ոչ,
- արդյոք լրացված ՀՀ-ն գոյություն ունի, թե ոչ,
- արդյոք անձնագիրը ժամկետանց է, թե ոչ,
- արդյոք անձնագրի տեսակին համապատասխանող տվյալը (սերիա-համարը)

համապատասխանում է ձևաչափին, թե՛ ոչ և վիճակի դեպքում յուրաքանչյուր տեսակի փաստաթղթին համապատասխան ցուցադրեր հարդորագրություն,

- պետք է կատարեր ՀՀ քաղաքացի լինելու կամ չլինելու ստուգում,
- պետք է ստուգեր անձի մահացած լինելը և անձի մահացած լինելու դեպքում թույլ չտար, որ մահացած անձանց անունով դուրս գրվեն փաստաթղթեր:

▪ ինչպես նաև, եթե անձը գործարքը կատարել է, հետո մահացել է, ապա պետք է մահվանից առաջ կատարված գործարքի համար հնարավոր լիներ դուրս գրել փաստաթուղթ:

▪ պետք է տարանջատվելին ՀՀ քաղաքացիների և ՀՀ քաղաքացի չհանդիսացողների համար համակարգի կողմից կատարվող ստուգումները և համապատասխանաբար դրանց վերաբերյալ ցուցադրվող հաղորդագրությունները, ըստ որի՝ կարող էին լինել արգելող (այսինքն չթողնել փաստաթղթի դուրս գրումը) կամ զգուշացնող (պարզապես խնդրի մասին տեղեկատվական հաղորդագրություն պետք է ցուցադրվեր, սակայն թողնել համակարգը փաստաթղթի դուրս գրումը),

▪ նկարագրված չէ ոստիկանության հետ տվյալների ստուգման ժամանակ (ստուգել կոճակը սեղմելիս), երբ հնարավոր չէ լինում կապ հաստատել Ոստիկանության «վեբ» սերվիսի հետ, համակարգը ինչ պետք է անի և ինչ հաղորդագրություն պետք է ցույց տա, մասնավորապես՝ համակարգը պետք է զգուշացնող հաղորդագրություն ցուցադրի:

Ընդ որում՝ դեռևս 2025 թվականի մարտի 14-ի գրությամբ (ուղարկվել է էլեկտրոնային փոստերին) առաջարկվել էր տեխնիկական առաջադրանքում ներառել սխալի հաղորդագրությունների աղյուսակ հետևյալ ձևաչափով՝ «Նաև անհրաժեշտ է առանձին աղյուսակով լինի նաև սխալի հաղորդագրությունների ցանկ, այսինքն օգտվողը ինչ գործողություն է անում, սխալի հաղորդագրությունը ինչ տեսակի է /տեղեկատվական, թե սխալի/ և սխալի հաղորդագրության բովանդակությունը»:

15) N 1 հավելվածի 1.16. կետով սահմանվել է. «Պետք է որոնման արդյունքների աղյուսակում հնարավոր լինի վերնագրի կողքին առկա սլաքների միջոցով տվյալները փեղակավորել ըստ այբբենական կարգի, ըստ ամսաթվերի կամ այլ թվային արժեքների աճման կամ նվազման կարգի. Աղյուսակի սյունակները պետք է հնարավոր լինի մեծացնել և (կամ) փոքրացնել, ինչպես նաև դասավորել ըստ անհրաժեշտ առաջնահերթությունների՝ պարզապես վերնագրի վրա սեղմելով և փեղակոխելով նախընտրելի հատված: Որոնման արդյունքների աղյուսակում պետք է հնարավոր լինի նաև ընտրել, թե որ սյունակներն են անհրաժեշտ ցուցադրման համար արդյունքների աղյուսակում և որոնք՝ ոչ, իսկ արդեն ընտրված սյունակների դեպքում excel արդիականելիս արդարևսնվեն միայն հարկ վճարողի կողմից նախապես նշված սյունակները»:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջադրանքում բացակայում է N 1 հավելվածի 1.16. կետով նախատեսված ամբողջական, ավարտական, պատշաճ նկարագրությունները, այդ թվում՝ N 1 հավելվածի 5-րդ կետի Պահանջ 2-ի 3.1.1. կետով նախատեսված գործառնության մանրամասն նկարագրությունը, 3.1.2. կետով նախատեսված ինտերֆեյսային մանրամասն նկարագրությունը:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջադրանքով նկարագրված է միայն տվյալների տեսակավորումը, որն էլ թերի է: Մասնավորապես՝ համակարգի տեխնիկական առաջադրանքում նկարագրված է՝ «Համակարգի սևագրեր, դուրս գրված և սխալներով դուրս գրված էջերում ցուցադրում է արդյունքների ցուցակ՝ աղյուսակի տեսքով՝ բազմակի ընտրության, տեսակավորման, էջավորման և ամփոփ տողի հնարավորություններով: Ցուցակը աշխատում է առանց ամբողջ էջի վերաբերման: Տեսակավորում. «Մասնավորաբար անուն, ազգանուն», «Փաստաթղթի տեսակ» սյունակների գլխիկների սերմնով ակտիվանում է անոթ/նվազող տեսակավորում»:

Նկարագրվածի մատով անհրաժեշտ է նշել, որ «մատակարարի անուն, ազգանունը» և «փաստաթղթի տեսակը» տեքստային դաշտեր են և ըստ ներկայացված նկարագրության ոչ թե պետք է տեսակավորվեն «անոթ/նվազող» կարգով, այլ ըստ այբբենական կարգի:

Պետք է հատկ նկարագրվեր յուրաքանչյուր ենթաբաժնի համար որոնման չափանիշները և դրանց արդյունքում որոնման արդյունքների աղյուսակում ցուցադրվող տվյալները (աղյուսակի տեսքով), և որոնման արդյունքների աղյուսակի առանձնահատկությունները:

Պետք է ցուցադրվող տվյալների նկարագրություններում նշվեր, թե որ տվյալն ինչպես է տեսակավորվելու:

Պետք է աղյուսակի յուրաքանչյուր վերնագրի կողքին առկա սլաքների միջոցով տվյալները հնարավոր լիներ տեսակավորել յուրաքանչյուրն ըստ իր տրամաբանության՝ ըստ այբբենական կարգի, ըստ ամսաթվերի կամ այլ թվային արժեքների աճման կամ նվազման կարգի:

16) N 1 հավելվածի 1.17. կետով սահմանվել է. «Որոնման արդյունքների աղյուսակի վերնագրերում նշատույնի օգնությամբ պետք է հնարավոր լինի նշել տվյալ էջի ամբողջ ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթղթերի ցանկը միանգամից կամ ընտրել մեկ կամ մի քանի անհրաժեշտ ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթղթեր: Պետք է նշատույնի կողքին առկա լինի սլաք, որին սեղմելու դեպքում կբացվի ընտրացանկ՝ «Բոլորը» և «Հանել նշվածները» փարբերակներով: «Բոլորը» սեղմելու դեպքում պետք է հնարավոր լինի նշել տվյալ ենթաբաժնի բոլոր ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթղթերը (բոլոր էջերի բոլոր փաստաթղթերը), իսկ «Հանել նշվածները» սեղմելու դեպքում պետք է հնարավոր լինի հանել բոլոր ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթղթերի նյութը»:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջադրանքում բացակայում է N 1 հավելվածի 1.17. կետով նախատեսված ամբողջական, ավարտական, պատշաճ նկարագրությունները, այդ թվում՝ N 1 հավելվածի 5-րդ կետի Պահանջ 2-ի 3.1.1. կետով նախատեսված գործառնության մանրամասն նկարագրությունը, 3.1.2. կետով նախատեսված ինտերֆեյսային մանրամասն նկարագրությունը:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջադրանքում նշված է, որ որոնման արդյունքների աղյուսակում կա «Ընտրություն» անվանումով դաշտ, որի մասին նկարագրված է հետևյալ՝ «Վերստում առկա է «նշել բոլորը» checkbox-ը՝ խմբային գործողությունների համար»:

Նկարագրված N 1 հավելվածի 1.17. կետով նախատեսված պահանջներին չի համապատասխանում, մասնավորապես՝ այն նախատեսված չէ որպես անվանումով դաշտ, այլ իրենից ներկայացնում է նշատույն, որի կողքին կա սլաք:

Համակարգի տեխնիկական առաջադրանքում մի քանի պարբերություն հետո նշված պահանջին վերաբերող ևս մեկ նախադասություն է առկա (այլ նկարագրություններ չկան)՝ «**Խմբային ընտրություն.** Վերնախորագրի checkbox-ը ընտրելիս ընտրվում են էջում երևացող բոլոր տողերը»:

Նկարագրված նույնպես չի ամբողջացնում նշված կետի պահանջները և թերի է նկարագրված: Առնվազն պետք է նկարագրվեն N 1 հավելվածի 1.17. կետով սահմանված պահանջները:

17) N 1 հավելվածի 1.18. կետով սահմանվել է. «Որոնման արդյունքում տվյալներ աղյուսակի վերևի հատվածում պետք է ցուցադրվեն այն որոնման չափանիշները, ըստ որոնց օգտվողը

իրականացրել էր որոշում: Այդ չափանիշները պետք է հնարավոր լինի ջնջել անմիջապես տվյալ պիրոլիզում՝ առանց «Որոշման պարամետրեր» պարամետրի բացելու, որի արդյունքում փաստաթղթերի ցանկը թարմացվում է ըստ մնացյալ չափանիշների: Պետք է հնարավոր լինի նաև ջնջել տվյալ պիրոլիզում առկա բոլոր որոշման չափանիշները՝ կրկին առանց «Որոշման պարամետրեր» պարամետրի բացելու, որի արդյունքում որոշման արդյունքները ևս թարմացվու են: Որոշման արդյունքների արդյունքի էջում պետք է հնարավոր լինի դիպել մինչև 100 փաստաթղթի վերաբերյալ տվյալ»:

Բացակայում է N 1 հավելվածի 1.18. կետով նախատեսված տեխնիկական առաջադրանքը, այդ թվում՝ N 1 հավելվածի 5-րդ կետի Պահանջ 2-ի 3.1.1. կետով նախատեսված գործառնության մանրամասն նկարագրությունը, 3.1.2. կետով նախատեսված ինտերֆեյսային մանրամասն նկարագրությունը:

18) N 1 հավելվածի 1.19. կետով սահմանվել է. «Պետք է հնարավոր լինի ըստ սերիա և համարի և անձնագրային տվյալների որոնել մինչև 100 փաստաթղթերի վերաբերյալ տվյալներ»:

Բացակայում է N 1 հավելվածի 1.19. կետով պահանջվող տեխնիկական առաջադրանքը, այդ թվում՝ N 1 հավելվածի 5-րդ կետի Պահանջ 2-ի 3.1.1. կետով նախատեսված գործառնության մանրամասն նկարագրությունը, 3.1.2. կետով նախատեսված ինտերֆեյսային մանրամասն նկարագրությունը:

19) N 1 հավելվածի 1.20. կետով սահմանվել է. «Պետք է հնարավոր լինի էջերում սյւթերի միջոցով էջերը թողթել ինչպես առաջին և վերջին, այնպես էլ նախորդ և հաջորդ էջեր կամ ընդդիմ կոնկրետ էջ. ինչպես նաև թափվող ցանկից ընդդիմ կամ ձեռքով լրացնել տվյալ էջում ցուցադրվող, ֆիզիկական անձի ձեռքբերման փաստաթղթերի քանակը»:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջադրանքում բացակայում է N 1 հավելվածի 1.20. կետով նախատեսված ամբողջական, ակարտական, պատշաճ նկարագրությունները, այդ թվում՝ N 1 հավելվածի 5-րդ կետի Պահանջ 2-ի 3.1.1. կետով նախատեսված գործառնության մանրամասն նկարագրությունը, 3.1.2. կետով նախատեսված ինտերֆեյսային մանրամասն նկարագրությունը:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջադրանքում նկարագրված է այսպանը՝

- «Էջավորում (Pagination). Ցուցադրվում է «էջում ցուցադրել N» ընտրացանկ (լրելայն՝ 25) և նախագահին կոճակներ «<<», «>», «>>», ինչպես նաև ընթացիկ «էջ X / Y» ցուցիչը» և «Ցուցադրվող տողերի քանակ, Ընտրացանկ՝ 25 / 50 / 75 / 100 տարբերակներով: հնարավոր էն նաև ձեռքով մուտք անել ցանկայի քանակը»:

Սակայն համակարգի տեխնիկական առաջադրանքում հստակ պետք է նկարագրվեր՝

- թե համակարգի որ էջերում են լինելու էջերի մատով գործողություններ կատարելու հնարավորությունները,

- էջի որ հատվածում է լինելու նշված էջավորման գործողությունը,

- միաժամանակ պետք է նկարագրվեր, որ «էջում ցուցադրել» հատվածում համակարգից օգտվողը ընտրում է թափվող արժեքներից որևէ մեկը կամ ձեռքով լրացնում է անհրաժեշտ քանակը, որի դեպքում համակարգը ինքնաշխատ կերպով պետք է թարմացնի և արտացոլի անհրաժեշտ քանակի փաստաթղթերը:

- պետք է նկարագրվեր սյւթերի բացատրությունը, մասնակրողապես սյւթերի միջոցով համակարգից օգտվողը էջերը թերթում է դեպի ամենաառաջին/ամենավերջին և նախորդ/հաջորդ էջեր,

- նկարագրված «ինչպես նաև ընթացիկ «էջ X / Y» ցուցիչը» հատվածում պետք է նշվեր համապատասխանաբար, որ ցուցադրվում է հերթական էջը և էջերի ընդհանուր քանակը,

- միաժամանակ նկարագրված չէ, որ պետք է սյւթերի արանքում որոշ քանակի էջեր արտացոլվեն, և համակարգից օգտվողը պետք է կարողանալ ընտրել կոնկրետ էջ:

20) N 1 հավելվածի 1.21. կետով սահմանվել է. «Պետք է հնարավոր լինի հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով արդեղ էլեկտրոնային եղանակով ըուրս գրված ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթղթերի վավերականությունը՝ այդ փաստաթղթերի սերիա-համարները լինելով»:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջադրանքում բացակայում է N 1 հավելվածի 1.21. կետով նախատեսված ամբողջական, ակարտական, պատշաճ նկարագրությունները, այդ թվում՝ N 1 հավելվածի 5-րդ կետի Պահանջ 2-ի 3.1.1. կետով նախատեսված գործառնության մանրամասն նկարագրություն, 3.1.2. կետով նախատեսված ինտերֆեյսային մանրամասն նկարագրությունը:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջադրանքում շարադրվել է միայն Պայմանագրով սահմանված պահանջը, սակայն մանրամասն նկարագրություն առկա չէ: Մասնավորապես պետք է նկարագրվեր՝

- որ կայքի որ էջի հորմոնով է անհրաժեշտ մուտք գործել տվյալները ստուգելու համար,
- ինչ ձևաչափով պետք է լրացվի սերիա-համարը (օրինակ լատինատառ տառ և 10 նիշ),
- լրացնելուց հետո ինչ կոճակ պետք է սեղմի (ստուգել կոճակին պետք է սեղմի),
- ստուգելու արդյունքում ինչ տվյալներ պետք է արտացոլվեն (պետք է արտացոլվի փաստաթղթի կարգավիճակները, որոնք են այդ կարգավիճակները),

- եթե մուտքագրվել է ձևաչափին չհամապատասխանող սերիա-համար ինչ հարդրագրություն պետք է ցուցադրի համակարգը

- և այլն:

Ընդ որում՝ դեռևս 2025 թվականի մարտի 14-ի գրությանը (ուղարկվել է էլեկտրոնային փոստերին) առաջարկվել էր տեխնիկական առաջադրանքում ներառել սխալի հարդրագրությունների արդյունակ հետևյալ ձևաչափով՝ «Նաև անհրաժեշտ է առանձին աղյուսակով լինի նաև սխալի հարդրագրությունների ցանկ, այսինքն օգտվողը ինչ գործողություն է անում, սխալի հարդրագրությունը ինչ տեսակի է /տեղեկատվական, թե սխալի/ և սխալի հարդրագրության բովանդակությունը»:

21) N 1 հավելվածի 1.22. կետով սահմանվել է. «Պետք է հնարավոր լինի ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթղթերի սերիա-համարները զանապետարանի համակարգ մուտքագրելու դեպքում տվյալ փաստաթղթերի վերաբերյալ տվյալներ փոխանցել էջված համակարգին»:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջադրանքում բացակայում է N 1 հավելվածի 1.22. կետով նախատեսված ամբողջական, ակարտական, պատշաճ նկարագրությունները, այդ թվում՝ N 1 հավելվածի 5-րդ կետի Պահանջ 2-ի 3.1.1. կետով նախատեսված գործառնության մանրամասն նկարագրությունը, 3.1.2. կետով նախատեսված ինտերֆեյսային մանրամասն նկարագրությունը:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջարկանքում շարադրվել է միայն Պայմանագրով սահմանված պահանջը, սակայն մանրամասն նկարագրությունն առկա չէ:

Միաժամանակ, համակարգի տեխնիկական առաջարկանքում նկարագրված է, որ «Ընդ որում, տվյալ ինտեգրումը արդեն կատարված է ամբողջ համակարգի համար»: Մինչդեռ «Այլ փաստաթղթեր» համակարգում այս մասով տեխնիկական առաջարկանք չկա և հետևաբար գանձապետարանի և «Այլ փաստաթղթեր» համակարգի միջև ինտեգրման տվյալների տեխնիկական առաջարկանք և չկա և նշյալ համակարգերը ինտեգրված չեն:

Համակարգի տեխնիկական առաջարկանքում պետք է նկարագրվեն՝

- որ գանձապետարանի համակարգում մուտքագրում են այն փաստաթղթի սերիա-համարը, որի վերաբերյալ ցանկանում են ստանալ տվյալներ,
- այդ դեպքում հարկային մարմնի համակարգին գանձապետարանի համակարգից հարցում է գալիս և մեր համակարգը հարցմանը համապատասխան պատասխաններ է ուղարկում,
- պետք է մանրամասն նկարագրվեն գանձապետարանին ուղարկվող տվյալները, թե որ տվյալներն են ուղարկվելու (օրինակ՝ փաստաթղթի դուրս գրման ամսաթիվ, մատակարարման ամսաթիվ, պայմանագրի համար, պայմանագրի ամսաթիվ, արժեք, ապրանքի տեսակ և այլն),
- համակարգերի միջև հարցումների և պատասխանների ուղարկման ֆորմատները, փալաների դեպքերը և համակարգում ցուցարկվող հաղորդագրությունները,
- և այլն:

Ընդ որում՝ դեռևս 2025 թվականի մարտի 14-ի գրությամբ (ուղարկվել է էլեկտրոնային փոստերին) առաջարկվել էր տեխնիկական առաջարկանքում ներառել սխալի հաղորդագրությունների արդյունակ հետևյալ ձևաչափով՝ «Նաև անհրաժեշտ է առանձին արդյունավոր լինի նաև սխալի հաղորդագրությունների ցանկ, այսինքն օգտվողը ինչ գործողություն է անում, սխալի հաղորդագրությունը ինչ տեսակի է /տեղեկատվական, թե սխալի/ և սխալի հաղորդագրության բովանդակությունը»:

22) N 1 հավելվածի 1.23. կետով սահմանվել է. «Պետք է հնարավոր լինի նաև ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթղթերից որոշ տվյալներ անհրաժեշտության դեպքում ինքնաշխալ կերպով արտացոլվեն տարբեր հաշվարկ-հաշվետվություններում»:

Բացակայում է N 1 հավելվածի 1.23. կետով պահանջվող տեխնիկական առաջարկանքը, այդ թվում՝ N 1 հավելվածի 5-րդ կետի Պահանջ 2-ի 3.1.1. կետով նախատեսված գործառնության մանրամասն նկարագրությունը, 3.1.2. կետով նախատեսված ինտերֆեյսային մանրամասն նկարագրությունը:

23) N 1 հավելվածի 2.1. կետով սահմանվել է. «Պետք է «Լիազորի գրասենյակ»-ի էջում ավելանան լիազորությունների նոր տեսակներ՝ պայմանավորված նոր փաստաթղթերի տեսակներով: Մասնավորապես, պետք է հնարավոր լինի տրամադրել «Դիտել», «Դուրս գրում» և «Միավերծվող դուրս գրված համարում» թույլտվությունները»:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջարկանքում բացակայում է N 1 հավելվածի 2.1. կետով նախատեսված ամբողջական, ավարտական, պատշաճ նկարագրությունները, այդ թվում՝ N 1 հավելվածի 5-րդ կետի Պահանջ 2-ի 3.1.1. կետով նախատեսված գործառնության մանրամասն նկարագրություն, 3.1.2. կետով նախատեսված ինտերֆեյսային մանրամասն նկարագրությունը:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջարկանքում նկարագրված է, որ՝ «Օգտվողների մուտքի մակարդակները սահմանվում են ըստ դերերի՝ դիտում, խմբագրում, հաստատում, ջնջում»: Մինչդեռ N 1 հավելվածի 2.1. կետով նախատեսված պահանջով, հստակ սահմանված են լիազորությունների անվանումները, որոնք չեն համապատասխանում նկարագրվածին: Ինչպես նաև չկան «խմբագրում, հաստատում, ջնջում» լիազորություններ, սակայն նկարագրվել են:

Համակարգի Տեխնիկական առաջարկանքով արդյունաբերվող նկարագրվել են օգտվողի թույլտվություններ՝

Կոդ	Թույլտվություն (permission)
v	view
d	delete
c	confirm
w	writeout
n	cancel
i	invalidate
s	sign
u	upload
a	attach
e	edit

Սակայն delete, confirm, writeout, cancel, invalidate, upload, attach, edit թույլտվությունները չեն համապատասխանում պահանջին, մասնավորապես նման լիազորություններ սահմանված չեն: Confirm, cancel, invalidate գործողություններն ընդհանրապես կապ չունեն համակարգի պահանջի հետ և Պատվիրատուի պահանջներում, օրինակ, փաստաթուղթը չեղարկելու, անվավեր համարելու պահանջ առկա չէ, ինչը հնարավոր էր տեսնել նաև ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 21-ի N 392-Ն որոշման մեջ:

Միաժամանակ, եթե լիազորությունների տեսակներն իրենց մեջ պետք է ենթադրեն որոշ գործողություններ անելու հնարավորություններ, ապա պետք է հստակ նկարագրվեն նախ լիազորությունների տեսակները, ապա թե որ լիազորությունն օգտվողին ինչ է թույլ տալիս անել և որ լիազորության ներքո ինչ գործողություններ կատարելու թույլտվություններ պետք է լինեն:

Համակարգի տեխնիկական առաջարկանքում նշվել է, որ՝ «Օգտվողը կարող է տեսնել այլ օգտվողների ստեղծած փաստաթղթերը միայն եթե ունի «Արտացոլել այլ օգտվողների փաստաթղթերը» լիազորություն»: Սակայն նման լիազորության պահանջ առկա չէ և դա ոչ թե լիազորություն է, այլ արդեն առկա լիազորությունների շրջանակում համակարգից օգտվողին տրվող որոշ հնարավորություն:

Համակարգի տեխնիկական առաջարկանքում նշվել է, որ «Լիազորությունների բացակայության դեպքում ենթաբաժինները չեն ցուցադրվում»: Սակայն նման պահանջ չի ներկայացվել և Պատվիրատուի հետ չի քննարկվել:

Միաժամանակ, համակարգի տեխնիկական առաջարկանքում նկարագրված է հետևյալ մասը՝ «Սևագրերի հետ կատարվող գործողություններ՝

1. Պահպանել - պահպանել փոփոխությունները առանց ստորագրման
2. Ստորագրել - ուղարկել ստորագրման համար

3. Կրկնօրինակել - ստեղծել նույնական պատճեն
4. Արտահանել - ներբեռնել PDF, XML կամ Excel ֆորմատով
5. Ջնջել - հեռացնել սևագիրը
6. Ճշգրտել - կատարել փոփոխություններ
7. Դուրս գրված փաստաթղթերի հետ գործողություններ
8. Դիտել - դիտել փաստաթուղթը
9. Չեղյալ հայտարարել - չեղարկել փաստաթուղթը
10. Անվավեր ճանաչել - հայտարարել ոչ վավեր
11. Կրկնօրինակել - ստեղծել նոր սևագիր հիմնվելով այս փաստաթղթի վրա
12. Ստացված փաստաթղթերի հետ գործողություններ
13. Հաստատել - հաստատել ստացումը
14. Մերժել - մերժել փաստաթուղթը
15. Ջնջել - հեռացնել իր ցանկից
16. Ատրազրել - ստորագրել էլեկտրոնային
17. Անվավեր/Չեղյալ փաստաթղթերի հետ գործողություններ
18. Հիտել - դիտել պատմությունը
19. Կրկնօրինակել - ստեղծել նոր վավեր փաստաթուղթ
20. Արտահանել - պահել արխիվային պատճեն»

Նկարագրվածի մասով նույնպես նման պահանջ առկա չէ, մասնավորապես՝ անհամապատասխանություններ ընդգծված են: Միաժամանակ՝

- անիրաժեշտ է նշել, որ ընդհանրական վերնագիր է նշվել «Սևագրերի հետ կատարվող գործողություններ» և ներքևում համարակալված շարադրվել է սևագրերին վերաբերող գործողություններ, մինչդեռ ինչպես երևում է 7-րդ, 12-րդ կետերից այդ վերնագիրը արդեն նկարագրվում են ոչ թե սևագրի, այլ արդեն իսկ դուրս գրված և ստացված փաստաթղթերի մասով գործողությունները,
 - հարկ է նշել, որ համակարգի պահանջներով ստացող կողմ առկա չէ ընդգծված 12-րդ կետից սկսած նկարագրություն, այլ ապրանքը ձեռք բերող ինքն է դուրս գրում փաստաթուղթ՝ ֆիզիկական անձի փոխարեն, իսկ ֆիզիկական անձն անգամ մուտք չունի համակարգ,
 - ընդգծված «ներբեռնել» գործողության մասով նկարագրությունը ճիշտ չէ և չի համապատասխանում պահանջին, պետք է առանձին նկարագրվել, քանի որ համակարգում ներբեռնում են միայն XML տեսակի ֆայլ,
 - ընդգծված 6-րդ կետի մասով ճշգրտել գործողության պահանջ առկա չէ, իսկ եթե նկարագրվածը վերաբերում էր սևագիր փաստաթղթի խմբագրմանը, ապա պետք է հատակ նկարագրվել խմբագրելու հնարավորությունը,
 - 9-րդ և 10-րդ կետերի մասով պահանջ առկա չէ և հնարավոր չէ դուրս գրված փաստաթուղթը չեղարկել կամ անվավեր համարել, ինչը հնարավոր էր տեսնել նաև ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 21-ի N 392-Ն որոշման մեջ,
 - 12-20-րդ կետերի մասով պահանջ առկա չէ և հարկ է նշել, որ համակարգի պահանջով ստացող կողմ առկա չէ և հետևաբար չէր էլ կարող նշված գործողությունները նկարագրվել:
- N 1 հավելվածի 1.4. կետով սահմանված է, որ նախկինում դուրս գրված ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթուղթ պետք է հնարավոր լինի համարել լիցենզիայով դուրս գրված, որի գործողության կատարման մասով որևէ բան նկարագրված չէ:

N 1 հավելվածի 1.4. կետի նաև նախատեսված է, որ համակարգից օգնվողները գործողություններ կարող են անել ինչպես համակարգի ենթաբաժիններում, այնպես էլ որոշ

գործողություններ պետք է հնարավոր լինի իրականացնել բացված փաստաթղթի էջում, սակայն հստակ չի նշվել և տարանջատվել համակարգի ենթաբաժիններում ու բացված փաստաթղթում կատարվող գործողությունները:

Միաժամանակ նկարագրված չէ, թե նոր փաստաթղթերի տեսակներով պայմանավորված՝ յուրաքանչյուր փաստաթղթի մասով լիցենզիայի տեսակների ինչ տեսակներ կան: Մինչդեռ N 1 հավելվածի 2.1. կետում հստակ սահմանված է, որ լիցենզիայի տեսակները պայմանավորված են նոր փաստաթղթերի տեսակներով:

24) N 1 հավելվածի 3.1. կետով սահմանվել է. «Համակարգի «Հաշվետվություններ» բաժնում պետք է ավելանա նոր բաժին «Այլ Փաստաթուղթ» անվանը, որտեղ պետք է արտացոլվեն *e-invoicing* համակարգի միջոցով դուրս գրված ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթղթերը, ինչպես նաև պետք է հնարավոր լինի ըստ պարամետրերի իրականացնել որոնում և փնջվելը արտահանել»:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջարկանքում բացակայում է N 1 հավելվածի 3.1. կետով նախատեսված սահմանված պահանջի մասով ավերջական, ակարտական, պատշաճ նկարագրությունները, այդ թվում՝ N 1 հավելվածի 5-րդ կետի Պահանջ 2-ի 3.1.1. կետով նախատեսված գործառնության մանրամասն նկարագրությունը, 3.1.2. կետով նախատեսված ինտերֆեյսային մանրամասն նկարագրությունը:

Կատարողի կողմից ներկայացված համակարգի տեխնիկական առաջարկանքում շարադրվել է միայն պայմանագրով սահմանված պահանջը, սակայն մանրամասն նկարագրություն առկա չէ: Մասնավորապես պետք է նկարագրվել՝

- էջում պարունակվող դաշտերը,
- նկարագրվող թե ինչ որոնման պարամետրերով է կատարվելու որոնումը, օրինակ՝ ըստ սերիա-համարի,
- դուրս գրման ամսաթվի,
- մատակարարման/ներդրման ամսաթվի,
- փաստաթղթի տեսակի,
- կարգավիճակի,
- ՀՎՍՎ բաժնի,
- գնորդի ՀՎՀՀ-ի,
- մատակարարի ՀՄՀՀ-ի,
- մատակարարի ՀՄՀՀ-ի անձնագրային տվյալների,
- նշանակման վայրի,
- ընհանուր արժեքի տվյալի,
- գնորդի խմբի
- և այլն,

▪ թե ինչ կառուցվածք և տեսք պետք է ունենա որոնման արդյունքների արդյունքը, ինչ գործողության կոճակներ պետք է լինեն էջում:

• տվյալների արտահանման ձևաչափերը, մասնավորապես՝ PDF և excel,

▪ նկարագրվող excel ֆայլում արտածվող տվյալները և տրամադրվող ձևառեսքը, իսկ PDF ձևառեսքի մասով նկարագրված է միայն «Այլ փաստաթղթեր» համակարգի (ոչ թե «Հարկատու 3» համակարգի) կոնկրետ տեսակի փաստաթղթի նկարագրական մասում, որն էլ, ինչպես

նկարագրված է վերոնշյալ կետերից որոշներում, թերի է և չի համապատասխանում պահանջներին:

Ի հավելումն վերոնշյալ՝ հարկ է նշել, որ Կատարողին՝

▪ 21.01.2025 թվականին տրամադրվել է «Հարկատու 3» համակարգի թեստային միջավայր, 21.03.2025 թվականին ևս ուղարկվել է «Հարկատու 3» համակարգի թեստային միջավայրի տվյալ (ստորև կցվում է էկրանանկար),

▪ 22.01.2025 թվականին «Էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր» (e-invoicing) համակարգի թեստային համակարգի գաղտնաբառերը, այնուհետև 05.02.2025 թվականին կրկին տրամադրվել են նոր գաղտնաբառեր (ստորև կցվում է էկրանանկար),

▪ այնուհետև 17.02.2025 թվականին տրամադրվել է գործող «Էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր» համակարգին ինտեգրվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը, ինչպես նաև XSD-ների և XML-ների տվյալները (ստորև կցվում է էկրանանկար),

▪ ուղարկվել էին համակարգի ներդրման համար հինգ հանդիսացող ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 21-ի N 392-Ն որոշումը, որը հասանելի է նաև համացանցում,

▪ դեռևս 12.03.2025 թվականին կազմակերպվել էր առցանց հանդիպում և ցուցադրվել էր գործող ինվյուս համակարգն ու դրա մանրամասները և տեղեկացվել էր, թե նոր ներդրվող համակարգի մասով ինչ է ավելակվում:

Ունենալով անհրաժեշտ տվյալներ՝ Կատարողի կողմից համապատասխան ուսումնասիրություններ չեն կատարվել, չեն վերլուծվել համակարգի ներդրման ամբողջ տրամաբանությունը և պահանջը (համակարգի տեխնիկական առաջադրանքում ոչ մի տեղ չկա նշված համակարգի ներդրման նպատակն ի վերջո որն է), առկա չէ կատարված բիզնես անալիտիկա, հետևաբար՝ համակարգի տեխնիկական առաջադրանքում նկարագրված են համակարգի պահանջներից թույլ և համակարգում մասնակցություն չունեցող գործընթացներ (ինչպես օրինակ՝ փաստաթղթի չեղարկումը, անվաներ համարումը, ստացող կողմի մասին նշումները, կազմակերպության և ԱՀ-ի տվյալների հատվածում ՀՕՀ դաշտ նշելը, փաստաթղթին հարկային հաշիվ վերնագրելը և այլն):

Ստորև կնշվեն ևս մի քանի օրինակ, որոնք Կատարողի կողմից ներկայացված են համակարգի տեխնիկական առաջադրանքում, որոնք համակարգի պահանջներից թույլ են: Կյսվես.

▪ Համակարգի տեխնիկական առաջադրանքում նշվել է՝ «Վերջնական հաստատված փաստաթղթերը չեն կարող փոփոխվել՝ բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի» մասը: Նախ ձևակերպումից պարզ է դառնում, որ նկատի չի առնվել այն հանգամանքը, որ ըստ նկարագրվածի՝ փաստաթուղթը վերջնական թույլ գրված է, իսկ եթե թույլ է գրված, ապա ոչ մի պարագայում հնարավոր չէ փոփոխել փաստաթուղթը, իսկ ՀՀ կառավարության 21.03.2024 թվականի թիվ 392-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 7-րդ կետի համաձայն՝ փաստաթուղթը հնարավոր է միայն համարել սխալներով թույլ գրված (որի մասին չկա նշագրում տեխնիկական առաջադրանքում):

▪ Համակարգի տեխնիկական առաջադրանքում նշվել է՝ «Ըածի ներդրման միջոցով նախատեսվում է: ապահովել հարկային, մաքսային և հաշվառման գործընթացների թափանցիկություն և արդյունավետություն»: Սակայն համակարգը մաքսային գործընթացների հետ առնչություն չունի:

▪ Համակարգի տեխնիկական առաջադրանքում նշվել է, որ «համակարգի մասնակիցներն են՝ Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ, Նոտար չհանդիսացող ֆիզիկական անձ,

Իրավաբանական անձ, ինչպես նաև ԱՀ հանդիսացող անձիք, Արտասահմանյան կազմակերպության ներկայացուցչություն կամ մասնաճյուղ, ՊԵԿ աշխատակիցներ»): Սակայն նկարագրվածի մասով պետք էր նշել, ոչ թե առանձին ԱՀ չհանդիսացող ֆիզիկական անձ կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձ (որից ստացվում է, որ կարող է լինել նաև նոտար, բայց ոչ ԱՀ և հակառակը), այլ հենց անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձը:

Ինչպես նաև նկարագրված «արտասահմանյան կազմակերպության ներկայացուցչություն կամ մասնաճյուղը» ներառվում է իրավաբանական անձանց մեջ, սակայն առանձնացվել է՝

▪ Համակարգի տեխնիկական առաջադրանքում նշվել է «**Փաստաթղթի ստեղծում**» **հատված, որտեղ նկարագրվել է՝** «Օգտվողները կարող են ստեղծել նոր փաստաթուղթ Ընտրելով նախապես սահմանված ձևանմուշներից, կամ Սկսելով դատարկ փաստաթղթից»:

Նկարագրվածն անհասկանալի է և պետք է նկարագրվեր, որ նոր սևագիր փաստաթուղթ հնարավոր է ստեղծել xml-ով ներբեռնելու կամ հենց «վեբ» համակարգում անհրաժեշտ տեսակի փաստաթուղթը լրացնելու կամ էլ «api»-ի միջոցով ուղիղ կապով տվյալները բեռնելու միջոցով:

▪ Համակարգի տեխնիկական առաջադրանքում նշվել է «Փաստաթղթի պահպանում և փոփոխությունների կատակարում» հատված որտեղ նկարագրվել է՝ «Փոփոխությունների պատմությունը հասանելի է դիտման, ինչպես նաև նախորդ տարբերակ վերականգնելու համար»: Պետք է նախ նկարագրվեր, թե որ փաստաթուղթը կարող է փոփոխվել (դա միայն սևագիրն է, եթե ինարկն նկարագրությունը վերաբերում է խմբագրմանը, նկարագրությունից պարզ չէ), այնուհետև ըստ Պատվիրատուի պահանջի՝ փոփոխությունների պատմություն նախատեսված չէ համակարգով, անգամ եթե խմբագրում է սևագիրը, որի դեպքում խմբագրելուց հետո պահպանվում է և սևագրում արտացոլվում է միայն վերջին խմբագրված տարբերակը:

▪ Համակարգի տեխնիկական առաջադրանքում նշվել է «**Փաստաթղթերի որոնում և ֆիլտրում**» **հատված, որտեղ նկարագրվել է՝** «Առաջադեմ ֆիլտրացիայի միջոցով հնարավոր է ընտրել փաստաթղթեր ըստ կարգավիճակի»: Նկարագրվածի մասով պետք է նշել, որ համակարգում նախատեսված են սևագիր, թույլ գրված, սխալներով թույլ գրված ենթաբաժիններ և յուրաքանչյուր ենթաբաժնում արտացոլվում են միայն իրեն համապատասխանող «կարգավիճակով» փաստաթղթերը, օրինակ՝ Սևագրեր ենթաբաժնում սևագրերը և այլն: Միաժամանակ N1 հավելվածով «հաստատված և մերժված» կարգավիճակների վերաբերյալ պահանջներ նախատեսված չեն:

Համակարգի տեխնիկական առաջադրանքի մեկ այլ «**Ֆիլտրացման պարամետրերի նկարագրություն**» հատվածում (սևագիր, հաստատված, մերժված) և բաժնի» (չնայած այն հանագամանիցին որ պետք է նախ նկարագրվեր համակարգում նախատեսված ենթաբաժինները՝ սևագիր, թույլ գրված, սխալներով թույլ գրված, որը նկարագրված չէ և ապա նոր որանցից յուրաքանչյուրում որոնման չափանիշները) նկարագրված է, որ որպես որոնման պարամետր կարող է նշվել «Drop down սևագիր / թույլ գրված / սխալներով թույլ գրված: Սակայն որպես որոնման պարամետր՝ չի կարող միաժամանակ այդ 3 արժեքները ընտրացանկից ընտրվել և որոնվել, քանի որ ամեն մի ենթաբաժին առանձին է (Սևագրեր, Դույլ գրված, Միայններով թույլ գրված) և ամեն մի ենթաբաժնում արտացոլվում են իր «կարգավիճակով փաստաթղթերը», օրինակ Սևագրեր ենթաբաժնում սևագրերը և այլն:

Իսկ նկարագրված տարբերակով առացվում է, որ տեխնիկական առաջադրանք կազմվում առնվազն համակարգի ենթաբաժինների և դրանցից յուրաքանչյուրում կատարվող գործողությունների առանձնահատկությունները չի պատկերացրել, թեև այն հանգամանքին, որ

«Էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր» (e-invoicing) թեստային համակարգն առկա է և հնարավոր էր ուսումնասիրել, ինչպես նաև համակարգի մասին նկարագրվել է նաև 2025 թվականի մարտի 12-ին կազմակերպված առցանց հանդիպման ընթացքում:

«Ֆիլտրացման պարամետրերի նկարագրություն» հատվածում նշվել է՝ հնարավոր է որոնել ըստ **«Փաստաթղթի համար»**-ի: Սակայն ՀՀ կառավարության 21.03.2024 թվականի թիվ 392-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ փաստաթուղթը նույնականացվում է սերիա-համարով և պետք է որոնումը լինել սերիա-համարով: Միաժամանակ չի նշվել, որ պետք է հնարավոր լինի մինչև 100 փաստաթուղթ որոնել:

«Ֆիլտրացման պարամետրերի նկարագրություն» հատվածում նշվել է, որ որոնում պետք է լինի նաև ըստ **«Ստեղծման ամսաթվի, Դուրս գրելու ամսաթվի»**-ի:

Սակայն տվյալ ամսաթվային միջակայքով որոնումը մեկ էջով չի որոնվում, ինչպես նկարագրությունից է երևում, այլ ամեն մի ենթաբաժնում իր առանձնահատուկ որոնումն է կատարվում: Օրինակ՝ Սևագրե ենթաբաժնում հնարավոր չէ որոնում կատարել դուրս գրման ամսաթվով, քանի որ սկսվում մենակ սևագիր է և փաստաթուղթը դեռ դուրս չի գրվել, նույնը դուրս գրման ամսաթվին է վերաբերում:

Միաժամանակ նկարագրված չէ սխալներով դուրս գրված համարելու ամսաթվով որոնման հնարավորությունը (սխալներով դուրս գրման գործընթացի մասին ընդհանրապես նշագրում չկա տեխնիկական առաջադրանքում):

«Ֆիլտրացման պարամետրերի նկարագրություն» հատվածում նշվել է, որ որոնում է իրականացնում **«Տեղեկատվության աղբյուր»** Dropdown (ձեռքով մուտքագրված / ավտոմատ ներբեռնված)՝ չափանիշով:

Սակայն նման որոնման պարամետրի պահանջ չկա:

«Ֆիլտրացման պարամետրերի նկարագրություն» հատվածում նշվել է, որ որոնում է իրականացնում **«Միայն տեսակ (միայն սխալներով դուրս գրվածների համար)»** Dropdown (օր.՝ սխալ ՀՎՀՀ, գումարի անհամապատասխանություն, կրկնօրինակ, այլ)՝ չափանիշով:

Սակայն սխալներով դուրս գրվածը դա փաստաթղթին շնորհիվ կարգավիճակ է և փաստաթուղթը սխալի տեսակ չի կարող ունենալ և առավել ևս ընտրացանկ չի կարող ունենալ, ինչպես նշվել է «Dropdown»-ի ցանկում:

Եթե համակարգի օգտվողը գտնում է, որ փաստաթուղթը, որը դուրս է գրել, պարունակում է սխալ, ապա պետք է հնարավորություն ունենալ փաստաթղթին շնորհել սխալներով դուրս գրված «կարգավիճակ», և որից հետո փաստաթուղթը պետք է արտացոլվեր միայն «Սխալներով դուրս գրված» ենթաբաժնում: Որտեղ ի դեպ անհրաժեշտ չէ ըստ կարգավիճակի որոնել, քանի որ այդ բաժնում պետք է արտացոլվեն միայն սխալներով դուրս գրված փաստաթղթերը (սխալ պարունակող **սևագիր** փաստաթուղթը և փաստաթղթին սխալներով դուրս գրված «կարգավիճակ»-ի շնորհիվ անթոցոմյին տարբեր բաներ են, որի մասին բացատրվել է 2025 թվականի մարտի 12-ին կազմակերպված առցանց հանդիպման ընթացքում, այդ թվում ցուցադրվել է գործող e-invoicing համակարգում ապրանքի տեղափոխության բեռնազրի օրինակով):

«Ֆիլտրացման պարամետրերի նկարագրություն» հատվածում նշվել է, որ որոնում է իրականացնում **«Տեսանելիություն / հասանելիություն»** Dropdown (միայն ինձ / իմ բաժինը / բոլոր օգտատերերը)՝ չափանիշով:

Սակայն դա որոնման պարամետր չէ, այլ առանձին կոճակի տեսքով համակարգից օգտվողին տրվող հնարավորություն (իր լիազորությունների սահմաններում): Միաժամանակ,

չակերտավոր որոնման չափանիշներում բացակայում են բազմաթիվ տվյալների նկարագրություններ:

Համակարգի տեխնիկական առաջադրանքի **«Սևագրե, դուրս գրված և սխալներով դուրս գրված էջերի աղյուսակի նկարագրություն»** հատվածում նկարագրված է, որ որոնման արդյունքում արտացոլվում է «Փաստաթղթի տեսակ» և նկարագրված է՝ «Ցուցադրվում է որպես «Մուտն Ազգամուն», սեղմելիս բացվում է տվյալ տողի դիտման էջը»:

Սակայն նախ պետք է նկարագրվեր համակարգում նախատեսված յուրաքանչյուր ենթաբաժին, որը նկարագրված չէ և ապա նոր դրանցից յուրաքանչյուրում արտացոլվող տվյալները:

Երկրորդ՝ աղյուսակի անվանումը պետք է լիներ «Այլ փաստաթղթի տեսակ», ապա պետք է նկարագրվեր, որ ցուցադրվում են N 1 հավելվածի 1.7. կետով սահմանված փաստաթղթի տեսակները՝

- գյուղատնտեսական արտադրանքի արտադրության գրառվող՝ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձից գյուղատնտեսական արտադրանքի ձեռքբերման փաստաթուղթ,

- անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից ձեռքբերման փաստաթուղթ,

- անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում գույքի ներդրման փաստաթուղթ,

այլ ոչ թե նկարագրվածը, որից չի հասկացվում ի վերջո ինչ է ցուցադրվելու («Ցուցադրվում է որպես «Մուտն Ազգամուն», սեղմելիս բացվում է տվյալ տողի դիտման էջը»):

Համակարգի տեխնիկական առաջադրանքում նշված է, որ որոնման արդյունքում ցուցադրվում է «Սերիա և Համար»։ Մինչդեռ այդ չափանիշով նախ պետք է նկարագրվեր որոնում, որը որպես որոնում նկարագրված չէ որոնման մասում, ապա նոր դրան համապատասխան որպես որոնման արդյունք:

Միաժամանակ «Սերիա և Համար»-ի կողքին նկարագրված է՝ «Ցուցադրվում է գործարքի եզակի նույնականացուցիչը կամ անվանումը՝ Համընդիմնոր եզակի նույնացուցիչ» — տվյալների եզակի նույնացման համար նախատեսված 128-բիթանոց արժեք է, որն օգտագործվում է ծրագրավորման, տվյալների բազաների և ցանցային համակարգերի մեջ՝ երաշխավորելու համար, որ յուրաքանչյուր նույնացուցիչ կլինի եզակի ամբողջ աշխարհում:»:

Սակայն պետք է պարզապես նկարագրվեր, որ արտացոլվում է փաստաթղթի սերիա-համարը, իսկ փաստաթղթի սերիա-համարի գեներացման մասին պետք է տեխնիկական առաջադրանքում առանձին բաժնում նկարագրվեր N 1 հավելվածի 1.9. կետով նախատեսված պահանջը (Էլեկտրոնային եղանակով դուրս գրվող՝ ֆիզիկական անձից ձեռքբերման փաստաթուղթը պետք է պարունակի չկրկնվող և սահմանված կարգով գեներացված սերիա և համար (այսուհետ՝ սերիա-համար), որն այդ փաստաթուղթը նույնականացնող հիմնական վավերապայմանն է: Սերիա-համարը պետք է բաղկացած լինի 11 նիշից, որի առաջին նիշը պետք է սկսվի C լատինատառով, իսկ մնացած 10 նիշը պետք է լինեն թվեր), սակայն նկարագրված չէ:

Նկարագրված որոնման արդյունքների աղյուսակը թերի է և որոնման արդյունքի չակերտավոր աղյուսակում բացակայում են բազմաթիվ տվյալների նկարագրություններ:

Նաև չի համապատասխանում անգամ կազմած տեխնիկական առաջադրանքին, մասնավորապես՝ եթե որոնման չափանիշով նշված է, որ «Հարկ վճարողի ՀՎՀՀ-ում (չհաշվված այն հանգամանքը, որ պետք է լինի դուրս գրողի, վաճառողի կամ մատակարարի, գնորդի ՀՎՀՀ-

ներով՝ առանձնացված դրոշմում, ոչ թե պարզապես անորոշ հարկ վճարողի (ՀՀՀ) կարող է որոնել, ապա «հարկ վճարողի ՀՀՀ» դրոշման արդյունք նկարագրված է արդյունքի աղյուսակում:

Միաժամանակ, համակարգի տեխնիկական առաջադրանքում թերի նկարագրված սխալ հաղորդագրությունների մեծամասնությունը վերաբերում է փաստաթղթերի ստորագրման գործընթացին, այն դեպքում, երբ ստորագրման գործընթացի մասին առկա չէ տեխնիկական առաջադրանք և ըստ որի՝ նոր պետք է ապահովելին սխալի հաղորդագրությունները:

[illegible]

Հարգելի գրողներներ
Հայրենի եմ, որ «Հաշվարկային վաճառքային» (e-invoicing) թեստային համակարգի հրավեր է
<https://ol-e-invoicing.fasservice.am>

Միջամտման, կայունության, որ համակարգում ստեղծվել է երբ օգտվող է անկախորեն և բնականորեն համակարգը մտքը գործող (կոմունիկացիայի) հետևանքով օգտվող սեփականության գաղափարով:

00001656 mid 00001656 0f298M7

Copyright © 2004 by John Wiley & Sons, Inc.

Aerona Dynamics

FW: ၆၆၂ နေရာအားဖြင့်

[illegible]

Investment Age 29

1000

Կղզի Ներկայացված է՝ «Էկոտուրիզմի փոփոխությունը համակարգի մեջ» համադրության համար անվտանգության վերաբերյալ: Ոչպես նաև՝ XSD-ն ընդ

Laboratory of Chemical Physics, National Institute of Standards and Technology, Gaithersburg, Maryland 20899

<http://www.e-invoicingtaxservice.nuffaut>

<http://ew.tuxservice.com/tuxsystem-fe-weltaxperten-logout-service>

39

 Reply  Forward
 Fri 21.02.2025 5:55 PM
 Ammine Gigoyan
 «Հարկաւոր 3» թանգարտի հասկարգող օտարի անվտանգ ու զարկերակաւոր
 to ammine.gigoyan@arminfo.com / ammine.gigoyan@arminfo.com
 Cc: arminfo@arminfo.com; arminfo@arminfo.com; arminfo@arminfo.com
 ❶ You forwarded this message on Fri 21.02.2025 6:02 PM.

Հարգելի գործընկերներ
Կից ներկայացվում է «Հարկառու 3» թեստային համակարգի օգտին անվանումն ու գաղտնաբառը
username- 08220376, pass- 08220376

<https://uattaxpayer3.taxservice.am/>

Միաժամանակ բացակայում է N 1 հավելվածի Պահանջ 2-ի 4.2.3. կետով նախատեսված տեղեկատվական շտեմարանի ամբողջական, ալֆատական, պատշաճ նկարագրությունները: Մասնավորապես՝ տեղեկատվական շտեմարանի նկարագրությունում բացակայում են արժեքների նկարագրությունները, տեսակը, որ դաշտերն են պարտադիր, ինչպես նաև դաշտերի հնարավոր արժեքների տվյալները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ մասնագիտական խմբի ղեկավարն առաջարկեց Կատարորդի հետ 2024 թվականի նոյեմբերի 28-ին կբաված Պայմանագրից միակողմանի լուծել։
Մասնագիտական խմբի անդամներն առարկություններ չենելուագրեցելին։

Որոշվեց.

Առաջարկություն ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար պարոն Էդգար Փոտոգյանին՝ սխալկողմանի լուծել Պատվիրատուի և Կատարողի միջև կնքված պայմանագիրը, ինչպես նաև նախաձեռնել Կատարողին գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Մասնագիտական խմբի անդամներ՝

ՀՀ ՊԵԿ «ԶԻ ՍՈԼՅՈՒՆ» պետական ոչ առևտրային կազմակերպության նախագծերի իրականացման ղեկավարման ղեկավար (հանքի ղեկավար)	ՀՀ ՊԵԿ հանքային վարչարարության կազմակերպման, դիտարկման և հսկողության վարչության պետի տեղակալ
Աննա Պողոսյան	Լուսինե Մկրտչյան

Արմինե Գրիգորյան	ՀՀ ՊԵԿ «ՃԻ ՍՈԼՅՈՒԻԶՍ» պետական ոչ առևտրային կազմակերպության նախագծերի իրականացման դեպարտամենտի նախագծերի պատասխանատու	Ատղազոր ԱՐՄԻՆԵ ԳՐԻԳՐՅԱՆ 7412900528  ՉՁԵՎԵԾ ԽԵՐՑ ԿԵՆՏՐԱԼԻԶԱԿԱՆ ՀԱՅԿԱՆԻԿԻ ԽՐԵՐԻՆ
Իրինա Վարդանյան	ՀՀ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության ընթացակարգերի բաժնի գլխավոր հարկային տեսուչ	Digitally signed by VARDANYAN IRINA 5207950614 Date: 2025.08.29 18:09:13 AMT
Լուսինե Ղազարյան	ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության իրավական խորհրդատվության և զարգացման բաժնի գլխավոր մասնագետ	